Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

20183

891.99-192
Բ-72

Քնար Ագապյան
եվ փանոսյան
սանուց

Կ. Պոլիս
1872.

96513-ԿՀ

38496-67

... 711

891.99-192
Ք-72

# Ք Ն Ա Ր
## ԱԳԱՊԵԱՆ ԵՒ ՓԱՆՈՍԵԱՆ
### Ս Ա Ն Ո Ւ Ց

### 1. ՍԷՐ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Կը սիրեմ ես Հայաստան,
Ջի մայր եղաւ նա դիւցածին Հայութեան.
Երբ սիրտ՝ արիւն՝ ազատութիւն մէկ մէկու
Ողջոյն տուին սիրարկու։

*

Կը սիրեմ ես Հայաստան,
Որ յաղթանակ տարաւ քաջացն աննըման
Երբ սիրտ՝ արիւն՝ ազատութիւն մէկ մէկու
Խառնուեցան սիրարկու։

*

Կը սիրեմ ես Հայաստան,
Բայց պանդխտին սէրն է սրտին հառաչան
Ջի սիրտ՝ արիւն՝ ազատութիւն մէկ մէկու
Հետ ննջեցին սիրարկու։

ԵՂԱՆԱԿ — Մէօրլիքեան Ցատուրեան

ԽՕՍՔ — Ս. Հ. Մ. Ֆէլէկեան

---

### 2. ԻՂՁ ՊԱՆԴԽՏԻՆ

Թողէ՛ք զիս անէծք, ոճիրք մշտատեւ
Վճիռք անողոք բաղդին անարեւ.
Թողէ՛ք, որ փշրեմ շղթայն իմ ոտից,
Որ դարք ստրուածոյ հեծեն մշտալից.
Ջի զիս մայրական կարօտ տանջէ յար,
Թողէ՛ք, որ երթամ հանիմ յԱւա-...

*

Թողէ՛ք զիս օտար ափ...
Թողէ՛ք, որ սար՝ ձոր...
Վազեմ թեւարագ...
Տեսնեմ ամպամած ո...
Ջի զիս մայրական կա...
Թողէ՛ք, որ երթամ մ... րայր։

*

Թողէ՛ք զիս անգութ աստղեր՝ ու լուսին,
Ծաղիկ՝ ու զեփիւռ, արցունք պանդխտին.
Թողէ՛ք, որ ծածկեմ նմանայ շուքին տակ,
Ուր Վարդան հանգչի, ու փառաց մըտակ.
Ջի զիս մայրական կարօտ տանջէ յար,
Թողէ՛ք, որ երթամ նըստիմ յԱւարայր։

*

Թողէ՛ք, որ գրիչս առնեմ ու քնար,
Որտիկս՝ ու հոգիս լարեմ միշտահար,
Երգեմ՝ ո՜հ երգեմ հառաչանքս՝ ու սէր
յԱշխարհն Աստուծոյ, յերկիրս իմ աւեր.
Ջի զիս մայրական կարօտ տանջէ յար
Թողէ՛ք որ երթամ ու լամ յԱւարայր։

*

Թողէ՛ք մէն մ'աչերս շուրջ ածեմ կարօտ,
Տեսնեմ Եդեմիս կենացն առաւօտ,

20 03

Տամ անդ սիրահար իմ շնչիկս յետին,
Զոր Հայուն բաժակ դրած է երկին․
Բաւ զիս մայրական կարօտ տանջէ յար,
Թողէ՛ք, ալ Թողէ՛ք, մեռնիմ յԱւարայր։

1872 ապրիլ 12

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ

Տէրունի Ղուկասեան — Ս. Հ. Մ. Ֆէլէկեան

### 3. ՈՂԲ ՀԱՅՐԵՆԻ

Ո[illegible] Հայոց բախտին ողբերգուք,
[illegible]է՛ք սրտիս ալեկուք.
[illegible]ր լուսին' ու աստեղք ցրտագին
Կ'արտասուեն լալագին,
«Թէ դրեց երկինք»
«զՀայն ու Հայրենիք»
«Արտասուաց գերիք»
«Թշվառ եղկելիք,»
Եւ Թէ չէ՛ հերիք․

*

Ինչէ՛ք սուերք յիս որ, չիրմաւն իմ նախնեաց
Զափէք զչափ արտասուաց,
Ինչէ՛ք գԹով, յոր կամ ես ձեռս յիմ ի լանջ
Ընել Հայոց զայս պահանջ
«Թ'է՞ր դրեց երկինք»
«զՀայն 'ու Հայրենիք»
«Արտասուաց գերիք»
«Թշվառ եղկելիք,»
«Ինչո՞ւ չէ հերիք։»

*

Դուք ալ յիս մօտ եկէ՛ք պանդուխտ Հայեր
Եւ ձեռք տուէք անվեհեր
Երթանք, ուր մեզ կանչեն նշխարք' մեր փառաց
Եւ հոն կրկնեմք մեք միմեանց
«Թէ չէ՞ այլ հերիք»
«Որ դրեց երկինք»
«զՀայն ու Հայրենիք»
«Արտասուաց գերիք»
«Թշվառ եղկելիք,»
«Ո՛հ, հե՛րիք… հե՛րիք»

1872 ապրիլ 18

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ

Տէրունի Ղուկասեան — Ս. Հ. Մ. Ֆէլէկեան

### 4. ԻՂՁ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻՆ

Ո՛վ դու գեղափայլ գարունդ հայրենեաց
Որ զոգիս վառես ի խանդ կաթոգին
կազմէ քնարիդ ձայներն հեշտագին.
Երգէ Հայութեան դարերն քաջազանց,
Լսեմ ձայնիկդ ողբամ ողխուր
Հայուն արդի գարուն Թափուր։
Թէ օտար ափանց խոյս տամ աշխարհէն
Խոյանամ փարիմ ըղձև, Հայրենիք.
Զի աստ երբ յիշեմ վայելքդ ու բարիք
Ո՜հ, սիրտքս ու լանջս ուժգին տրոփեն։
Բայց ո՞ւր էր Թէ ազատ քոյլով
Սրանայի առ քեզ անձկով։
Ընդ հեշտալիրիկ Թռչնոց ճռուողիւն
Եւ ես Հայրենիքս երգեմ հէք անոք,
Այլ յուսամ, Երկինք, Թէ օր մի փառօք
Դառնայ Հայութեան գեղանին գարուն
Զարթիր ապա սիրտ ի խինդ
Զարթիր աղէ ի փառս քո
Ով հայրենիք սգաւէմ
Քեզ աւետեաց հնչէ ձայն
«Անցին օրերդ վշտալի»։

Եղանակ — Գաբրիէլեան
Նոյն

### 5. ԲԵՐԿՐԱՆՔ

Քաղցրաշնչիկ գարնան զեփիւռ
Մեզ հրաւէր կարդայ այսօր․
Ագապուհիք, ուրախ ի սիրտ
Ելնենք յողջոյն ի կայթ ի Թինդ։



փառաց է այս դաշտ պճնազարդ
Պարենք խայտանք դիմօք զուարթ
Ո՛ն փանոսեանք կայտառ սանունք
Ընդ մեզ ի խինդ արիք և դուք.
Զի փանոսեանք և Ագապեանք
Եղան ազատ քորք և եղբարք
Ուսմանց փունջէն քաղել քաղցրիկ
Հիւթ փրկանաց քաջաբեղմիկ։

6 մայիս 1872 — Խօսք և եղանակ
Էպրուհի Անդրէասեան
Աշակերտուհի Ագապեան վարժարանի

### 6. ՔԱՋԱԼԵՐ

Քոյրեր գարուն ծաղկափիւռ
Բերաւ զուարթ ամանոր
Ելնենք 'ի դաշտ համախումբ
Քաղենք ծաղկանց փունջեր նոր։
Քաջալերուհիք, առնունք յոյս
Դարուս ոգւով երջանիկ
Ընդ փանոսեանս աջ 'ի յաջ
Զի խնայենք փոյթ և ճիգ։
Ուսմանց դարաստն առնունք քայլ
Ցառաջ ըղմեզ կոչէ փառք
Ուխտենք գործել անձանձիր
Այս է Հայուն տալ նոր կեանք։

1872 մայիս 5 — Խօսք և Եղանակ
Ղամբէուհի Յարութիւն

### 7. ՀԱՆԳԻՍՏ ՈՒՂԵՒՈՐԻՆ

Մինչ լոյսն Արփւոյն խոյս տայ 'ի մուտս ոսկեծիր
Դադրի սոխակն, լռէ բնութիւն հըրճուալիր
Շրջին մայրից տերեւք 'ի սիւգ զովասփիւռ
Աստեղք յայերս ընդ լուսնեկին կան 'ի սփիւռ։

* * *

Ընդ խիտ առ խիտ Թաւուտ մայրեաց հովանեաւ
Ի քառաժայռս կանգնի մատուռ առ շիրմաւ
Ցորում ՈՐ Էն պաշտի 'ի քաղցր ալելու
Ուղեւորին անդ և սրտին խանդ զեղու։

* * *

Դէմք 'ի ժպիտ աստ անդ ճեմէ յամրաքայլ
Ցայտեն ճաճանչք կիսալուսնի շողափայլ
Երկինք միայն օրհնեն զանճառ ԵԷՀՈՎԱՆ
Բարէ քանի՞ պայծառ ցոլայ ցայգ գարնան։

* * *

Անդ ուղեւորն երթայ խնդրել իւր բաժին
Ընդ հովանեաւ առնու հանգիստ մատուռին
Լարէ քնարն երգէ զուարթ ի ձայնիկ
Ըզ սիրուհին չքնաղ կուսանն գեղեցիկ։

* * *

Այլ վշտահար Թուի ի տենչ հայրենին
Մէն մի ձայնին արտասունք հոսէ դառնագին
Ո՜հ, յիշէ նա Հայուն անցեալն վեհապանծ
Անձկայ ընդ փոյԹ գրկել զերկիր քաջազանց։

Եղանակ — Խօսք
Իսկուհի Սարգիսեան — Իսկուհի Յակոբեան
Աշակերտուհիք
Ագապեան վարժարանի

### 8. ՍԷՐ

Քանի՞ քաղցրիկ, Սէ՛ր, քո բարբառ,
Ո՛ որ իշխես երկրին համայն.
Զիք ոք, որ քոյդ անուան ի լուր,
Զերգէ զոգիդ ի խինդ ի պար։
Դու խաղաղիկ դու հանդարտիկ
Վառես ի մեզ կիրքըդ ազատ.
Աստուածային փափուկ շէնքին
Պայծառ ծագես լոյս փողփողիկ։

Որ 'ի բարձանց անհուն երկնի
Ջերմ ձիր չքնիղ մեզ նուիրիս
Ո՛հ, Թագուհիդ Սէր գեղեցիկ
Պաշտեմ զաշխոյժ և զեռանդ քո
Ով խանդակաթ ջահ լուսատու
Փանիո՛ն դու արծարծես մեզ
Զքեզ պաշտողին տխուր զոգի ։

Նշանակ նոյն — Յակոբեան
Աշակերտուհի
Ագապեան վարժրնի

---

## 9. Ի 24 ՄԱՅԻՍԻՆ

Այսօր գարուն է հայկազանց,
Դաշտեր ծաղիկ են զգեցած՝
Ծաղիկ կենաց.
Ծաղկանց քո՛յրեր ելէք ի տես միաբան,
Որ հայրենիք տեսնէ ծաղկունս Ագապեան.
Սահմանադրութեան տուէք ձեր ողջոյն,
Թող պանծայ ի ձեզ ամէն Հայութիւն,
Ամէն միութիւն ;

*

—Արեւ ծագեց Հայոց սարին,
Լոյս է բերած մեր աշխարհին՝
Ոսկեծղին.
Լուսոյ քոյրե՛ր ելէք ի ձերն Հայաստան,
Որ Արեւելք փայլի լուսովն Ագապեան.
Սահմանադրութեան անդ տուէք ողջոյն
Թող պանծայ ի ձեզ ամէն Հայութիւն,
Ամէն միութիւն :

*

Շաւարշանի ծոց լուսալիր
Սիրոյ դրօշ մ'իջաւ կարմիր՝
Գեղեցկածիր
Սիրոյ քոյրե՛ր օ՛ն դուք առէք չարժէք զայն,
Որ Հայութիւն տեսնէ զաքրն Ագապեան
Սահմանադրութեան անդ գրէք անուն,
Եւ թող անդ խմբին ամէն Հայութիւն՝
Ամէն միութիւն ։

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Մէօրիքեան Տատուրեան — Գ. Խ. Պիւլպիւլեան

---

## 10. ՀՐԱԻԷՐ

Յառա՛ջ ով եղբարք,
Կոչէն ըզմեզ դարք.
Յառա՛ջ կըսէ մեզի երկինք սիրահայն
Օն յառաջ երթանք.
Եւ 'թեւ 'ի թեւ փութանք ի մերն Հայաստան՝
Սահմանադրութեան ։

'Ի ձեր սիրոյ երգ
Արձագանք տուէք,
«Թէ ժամն եկաւ Հայոց ազգի փրկութեան»
Ասպարէզ բացէք
Պանդուխտ եղբարց մեր որ, հանէին միաբան
Սահմանադրութեան ։

*

Բացուած է Եդեմ
Հայուն դէմ առ դէմ.
Գեղածիծաղ ժպտին ծաղկունք անդհամայն
Մեր կենաց վսեմ.
Փունջեր կապենք ճակտին վրայ մեր միայն
Սահմանադրութեան ։

*

Յառա՛ջ օն եղբարք
Կոչէն ըզմեզ դարք.
Յա՛ռաջ կըսէ նոր Թուականն Հայութեան,
Օ՛ն յառա՛ջ փութանք,
Այս աւետեաց է ձայն սիրոյ. գթութեան
Սահմանադրութեան ։

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Աղաւնի Յակոբեան — Ս. Թիւրապեան
Աշա. փան. վարժրնի.



## 11. ԽՐԱԽՈՅՍ

Օ՛ն, Ագապեանք դիմեմք ազատ դէպ ի լոյս
Ընդ մեզ և դուք ով փանոսեան Հայկազունք
Վերականգնենք զՀայն թշուառ և անյոյս
Օն ձեռն ի ձեռն պարզենք դրօշն Հայութեան։
Ալ բաւ է մեզ ընդ դառն լծով օտարաց
Ճնշել, հեծել, ողբալ զփառս մեր անդարձ ։
Հայն ալ երբեմն իւր պերճ գործովք պարծեցաւ
Եւ վեհազունք ։ ո՛հ, փայլ տուին ազգութեան,
Միթէ և մեք չե՞մք այն քաջաց վեհ որդիք
Որք փրկեցին իրենց Ազգն ու Հայրենիք։
Թէ անխնայ հեղլին արիւն քաջազունք
Հեղունք և մեք դէթ վաստակոց մեր քրտունք ։

ԽՕՍՔ ԵՒ ԵՂԱՆԱԿ
Մէօրիքեան Տատուրեան
1872 մայիս 1 — Աշակերտուհի
Ագապեան վարժարանի

---

## 12. ՕՆ ԸՆԿԵՐՔ

Եկէք եղբարք գրկեմք զիրար
Զարնեմք զուարթ ուսման քնար
Զի ուսմամբ մեք պարտիմք զինել
Վատ թշնամւոյն մերում յաղթել՝

*

Որպէս մեղուք 'ի մէջ ծաղկանց
Ծծեն անոյշ անունդ իւրեանց
Քաղեմք և մեք յայս վարժարան
Զայն որ մեզ տայ պերճ ապագայն ։

*

Որ գիտութեան վանէ լուսով
Տգիտութեան մռայլ փութով
Նա բարերար է մարդկութեան
Անմահ յերկինս ն'ի սիրտ մարդկան ։

*

Իսկ այն որ միշտ լուսին ընդդէմ
Կը մաքառի ջանքով նսեմ
Ոչ երկինքը և ոչ յերկրի
Նա մեռեալ է անուն չ'ունի ։

*

Օն դուք ընկերք իմ փանոսեան
Դիմեմք յառաջ 'ի մէջ ուսման
Ուսմունքն ընենք մեզի վահան
Դէմ թշնամւոյն տգիտութեան ։

ԵՂԱՆԱԿ
Իսկուհի Սարգիսեան — ԽՕՍՔ
Սիրական Սարգիսեան
աշակերտ փանոսեան վրժրնի.

---

## 13. ՕՆ Ի ԼՈՅՍ

Օն յառաջ Հայուհիք
Դիմենք մեր դէպ 'ի լոյս,
Տարածեմք ուսմանց բոյր
Վեհ փառաց քաջայոյս ։
Պարզելով անվեհեր
Սուրբ դրօշ փրկութեան,
Սրանանք դէպ յառաջ
Զօնել կեանս ազգութեան ։
Օն և դուք փանոսեանք
Ձեռք տուք մեզ Ագապեանց
Որ ուսմանց սուր զէնքով
Յաղթենք մեր թշնամեաց ։

Խօսք և Եղանակ
Տիրուհի Ղուկասեան
1872 մայիս 1 — Աշակերտուհի
Ագապեան վարժարանի

---

## 14. ԱԼ ՀԵՐԻՔ

Թշուառ Հայրենիք ոհ դու լաս հերիք
Հոսես արտասուս քոյ հեղիկ հեղիկ
ՈՀ թող հանդարտի հառաչանքդ ու լաց
Թող լռէ տխուր մուսայդ ողբասաց։
Քողդ առ մէկդի թող աչքդ ժպտին
Դէմ մայրակարօտ քոյ Հայ պանդխտին

Որ ձեռն ի ճակատ մէջ օտար վայրաց
Կուլայ քոյ վսեմ փառքերն անմոռաց։

Հայրենիք քոյ սիրտդ բացաւ ծաղիկ
Քոյ չուրջդ ներկեց այգդ գեղեցիկ
Եւ եղ թրջնաթոյր այդ ամպոց տակէն
Որ վեց դարէ վեր գլուխդ ծածկէն ։

Եւ եղ ձեռքդ տուր որդիդ եմ քոյ ես
Տուր որ համբուրեմ սիրով սրտակէզ
Եւ քեզ սիրտ մ՚ունիմ տամ զանի յօժար
Զոր փանոսեան տուն տուաւ քեզ հա-
1872 մայիս 1 մար

ԵՂԱՆԱԿ
Իմաստիկ Կարապետեան ԽՕՍՔ
Յարութիւն Մանուկեան
Աշակերտ
փանոսեան վարժարանի

---

## 15. ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

Օ՛ն անդր Հայե՛ր յառաջ երթանք,
Սիրենք՝ սիրենք եղբօր փրկանք.
Սիրեմք, որով հնար միայն
Կըլլայ երթալ ի Հայաստան։

Յառաջ երթանք պէս այլ ազգաց,
Բաւ այլ կարօտ մնամք կենաց.
Օ՛ն փանոսեանք մենք ալ ջանանք
Հայրենասէր զերթ վարդանեանք։

Փութանք մենք ալ կեանք առնելու,
Բարի անուն ստանալու.
Ասով կըլլայ յառաջ երթալ
Ազգին ազատ անուններ տալ։
Սորվինք ազգաց մեր լեզուներ,
Անով կըլլանք միշտ անվեհեր
Անով այս կը վայելեմք
Անցելոյն փառք զոր արդ հեծեմք։

ԵՂԱՆԱԿ
Իմաստիկ Կարապետեան ԽՕՍՔ
Մատթէոս Ա. Կիւլպէնկեան
Աշակերտ փանոսեան
1872 մայիս 24 վարժարանի

## 16. ՆԻՆՋ ՀԱՅՈՒՆ

Ո՛վ Հայ եղբայրներ
Կը ննջէ՞ք դուք դեռ.
Կը յաջորդեն ահա՛ օրեր մեզ ահեղ.
Քանզի չունիմք սէր,
Զունիմք իշխան՝ և առաջնորդ հան-
ճարեղ։

Ա՛լ բաւ եղբայրներ՝
Բաւ ողբ՝ ու կոծեր,
Ատենն է ալ, որ մեք փրկենք վշտերէն
Հայք կարեվէր.
Քանզի չունիմք այլ ձեռք հզօր, որ
օգնեն,

Թէ սիրտ՝ ու հոգի
Մեր չգան ՚ի մի.
Ո՛վ Հայկազունք մեռած գրէք Հայաս-
տան,

Զի այլ կեանք չունի.
Կեանքը սրտի՝ և հոգոյ մէջն է միայն։

ԵՂԱՆԱԿ ԽՕՍՔ
Ամպէր Յարութիւնեան Սարգիս Թէքէեան
յԱշակերտաց
1872 մայիս 5 փանոսեան վարժարանի

---

## 17. Փոխադարձ յորդոր յուսմունս Ազապեանց և փանոսեանց

(Ազապեանք)

Հապա մանկտին Հայկայ զինուորք քա-
ջամարտ
Յառաջ ըզձեզ կոչեն Երկինք ի ձեր բազդ
Արկէք զանձամբ ուսմանց զէնքեր
Ոգի ազատ սիրտ անվեհեր
Ի սուրբ Թևոց հովանիս
Ձայնել փառաց աւետիս։

(Փանոսեանք)

Ով հայրենեաց Դուք Ամազոնք փրկու-
թեան
Ողջոյն սիրոյ ձօնեմք առ ձեզ հեշտ ՚ի
ձայն
Հայոց Մուսայք, այդ հրաւէր
Ազատութեան չքնաղ նուէր.



Աստեղն Հայկայ Արուսեակ
Ծագի ՚ի շող երփներանգ։

(Ազապեանք)

Սիրտ դիւցազնեայ մատաղ տիոյ մեր
սատար
Մեզ քաջալեր կարդայ յուսմանց վե-
հավայր
Անդ և ազատ բարբառ վսեմ
Շաւիղ կազմէ մեզ ուղփածեմ
Անխոնջ ճգանց հայրենի
Լիցուք որդիք արժանի։

(Փանոսեանք)

Գուն գործեսցուք քորք և եղբարք
Հայկազուն
Հարթել կենաց զուղին ի տենչ աննըկուն
Զի՞նչ ցանկալի քան զիմաստից
Բոյր անուշակ և հեշտալից
Քան զարահետ անվթար
Ասպարիզին ծաղկապար։

(Ազապեանք եւ Փանոսեանք)

Ին յայս հանդէս Ազապեանք ու փա-
նոսեանք
Եջ մտասցուք միմեանց յուխտի նը-
շանակ

Գործել ՚ի փոյթ արիական
Նա իրերաց կալ սերտ պաշտպան
Ցոր ազգութիւն վեհ փառօք
Փայլի յաւերժ պարծանօք։

Կ. ՊԱՂՃԵԱՆ

Եղանակ
Մէհրէպեան [illegible]
եւ Տէր Գէ Ղուկասեան

---

## 18. ՀՐԱՒԷՐ ՀԱՅՐԵՆԵԱՑ

այն մի լսեմ ես հայեցի
ր ինձ կըսէ «արի՛ արի՛»
հ Թշնամւոյն չարիք շատցան
րի ո՛ Հայ ՚ի Հայաստան,
Եւ ո՞ւր երթամ ես անդէն,
Երբ չի՛ք ինձ ձեռք երկինքէն։

Անմխիթար հեծեմ աւա՜ղ,
Սիրտս ու հոգիս լինան նուաղ
Բոյն իմ չրթանց վրայ վառի,
Երբ ինձ կըսեն թ՚«արի արի»,
Եւ ո՞ւր երթամ ես անդէն,
Երբ չի՛ք ինձ ձեռք երկինքէն։

Երբ տեսանեմ կապոյտ երկին
Ուր շողայ լոյս գեղեցկագին
Յայնժամ սրտէս կը հասի վիշտ
«Արի արի» եւ զբ լսեմ միշտ.
Եւ ո՞ւր երթամ ես անդէն,
Երբ չի՛ք ինձ ձեռք երկինքէն։

Երբ Շաւարշան գուռայ ուժգին
Ցերկնից չանթեր փայլատակին,
Դեռ զիս կոչէ նոյն քաղցր ձայն
«Արի արի ՚ի Հայաստան
Կերթամ. չուզեմ ես այլ զէն
Ես ՍԷՐ ունիմ երկինքէն։»

ԵՂԱՆԱԿ ԽՕՍՔ
Իսկուհի Սարգիսեան Սիմոն Մինասեան
1872 մայիս 1 Աշակերտ
փանոսեան վարժարանի

---

## 19. ԳԱՐՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ահա՛ բարդ բարդ պայծառ ամպեր
կուգան ի տես,
Ահա՛ ծածկի կապոյտ երկինքը դէզ
ի դէզ.
Կը խոստանան զով զեփիւռ,
Թողլով ազատ հոգմ համբոյր.
Քանի՞ յայնժամ ձոր ու լեռներ կեն-
դանութեան բերին ձայն
Իբր արձագանք բնութեան.
Ահա՛ իջին յերկիր տարափք արծա-
թածիր,
Ահա՛ շողուն մարգն ու արօտք կե-
նասածիր,
Դէմ ձիւնաթոյր արեւու,
Որ համասփիւռ կը թողու.

Զիւր չիթ ամպ, որ ամփոփաւի ի խոնջ ծաղկանց թերթ խոնարհ.
Զոր այգաբեր տայ 'ի վայր.
Ահա՛ արթուն աչք բնութեան է բերկրալից,
Ահա՛ երգեն գեղեցկաձայն թռչունք երկնից.
Զաշխարհ լնուն ի գեղ գեղ,
Ցանվերջ նուագ սիրազեղ,
Ում կ'ըղձայլի, կապէ երկինք մարդ՝ ու ամեն բնութիւն,
Եւ փոխադարձ տան ողջոյն.
Ահա՛ բացաւ կոկոն վարդի դեռանորածին
Ահա՛ կուտայ սիրոյ բարև մանուշակին
Որք կը բուրեն անուշահոտ,
Հրճուի անտառ ծովն ու արօտ.
Որչափ երկինք երկիր պճնի այսպէս կենօք հրաշալեան,
Ցանժամ յիշեմ զՀայաստան։

ԵՂԱՆԱԿ — Թէնաւփ Նշանեան
ԽՕՍՔ — Համբարձում Նաքաշեան
Աշակերտ փանոսեան Վարժարանի
1872 մայիս 5

---

## 20. ԴԱՐՁ ԳԱՐՆԱՆ

Արևուն եկած տեսնեմ ահա լուսափայլ,
Որ շողշողէ ծաղկանց վրայ փայլ 'ի փայլ.
Ո՜հ ասի գարնան
կեանքն է համայն։
Գարուն կուգայ, և կ'հսկէ դաշտերուն,
Մարդուն՝ ծաղկին՝ թռչնոյն տայ կեանք ամենուն.
Ո՜հ ասի գարնան
կեանքն է համայն։
Բոյսերն ամեն 'ի գեղեցիկ հագուած գոյն,
Ո՛հ ի՞նչ հանդէս բանայ երկիր վեհագոյն
Ո՜հ ասի գարնան,
կեանքն է համայն։
Այս հայուն է Արև հայուն է գարուն,
Որ մեզ Մասեաց սարէին ծագէ կենսագոյն
Սոքա Հայկազեան
փառքերն է համայն։

ԵՂԱՆԱԿ — Պըրլանդի Սէրովբէ
ԽՕՍՔ — Նշան Յակոբեան
1872 մայիս 5 աշակերտ փանոսեան վարժարանի

---

## 21. ԴՊՐՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Բոյին օրեր
Գարնան դուներ,
Օր փառաւոր
Բերին մեզ նոր.
Վարդեր ծլեց մեր վայր ու դաշտ,
Ծաղկունք միմեանց հետ խաղան հաշտ.
Եկէ՛նք Հայեր 'ի տես ծաղկանց,
Որ վերջին զարդն են հայրենեաց։
Ծագեց արև
Մասիս վերև,
Ժամ փառաւոր
Բերաւ մեզ նոր.
Կեանք զգեցան ամեն ամայք
Մեր անցէլոյն անուշ վկայք,
Եկէ՛նք Հայեր, ժամ է կենաց,
Այս ժամ մեր զարդն է Հայրենեաց։
Ջրեր խայտան
'ի Հայաստան,
Նեկտար բոլոր
Բղխեց մեզ նոր.
Գետեր վէտ վէտ խայտան յալիս,
Հասին 'ի դաշտ, ու 'ի մէջ սրտիս.
Եկէ՛նք Հայեր 'ի տես փառաց,
Սոքա զարունք են հայրենեաց։

ԵՂԱՆԱԿ — Արտեմ Փրխեան
ԽՕՍՔ — Յակոբ Կ. Գալըպաքեան
1872 մայիս 5 աշակերտ փանոսեան վարժարանի



## 22. ԼՈՅՍ ՓԱՆՈՍԵԱՆ

Ծծեցէ՛ք եղբարք քաղցրիկ կաթ ուսման, որ անունդ տայ ձեզ,
Սփռէին ձեր ճակտին գիտութեան ծաղիկ ու գլխուն բեհեզ
Որով ապրիք ազատ արձակ
Եւ ծաւալէք դուք համարձակ
ի Հայաստան
Լոյս փանոսեան։

*

Փութացէ՛ք եղբարք թև ի թև գացէ՛ք փութացէք աշխոյժ
Զի դուք էք այժմիկ մեր Հայոց ազգին ապագային յոյժ
Ոն փութացէք ազատ արձակ
Ծաւալեցէք դուք համարձակ
ի Հայաստան
Լոյս փանոսեան։

*

Առէ՛ք իմ եղբարք, ձեր մատաղ քնարը սրտախօսիկ
Որ զանի ծնաք, սնաք ու պահէք եր գեղ Հայրենիք.
Ցայն երգեցէք ազատ արձակ
Ոն դուք եղբարք իմ համարձակ
ի Հայաստան
Լոյս փանոսեան։

*

Լոյս առէ՛ք յերկնից, կեանք առէ՛ք անտի որդիք հայկազին.
Ոգի զգեցէ՛ք, ոգի ում կարօտ եմք ազգովին
Անով գացէ՛ք ազատ արձակ
Ծաւալեցէք դուք համարձակ
ի Հայաստան
Լոյս փանոսեան։

ԵՂԱՆԱԿ — Մէօրիւքեան Տատուրեան
ԽՕՍՔ — Համբարձում Նաքաշեան
1872 ապրիլ 26 Աշակերտ փանոսեան վրժրնի.

---

## 23. ՀԱՅՆՈՒՀԻՔ

Կուսանք Հայկազանց
Դուք ծաղիկ դաշտաց.
Քանի՞ չէք պճնէք դրախտին վայր փշոտ,
Զոր Եփրատ լալեաց
Թանայ յալիս մշտասահիկն ի կարօտ։
Երբ սուրբ ձեր քնար
Երգէ տաղաւար,
Անդ՝ Տղմուտին կարմիր ալիք տան սփիւռ
Կոչակ անդադար
Զինազգեցիկ բերէն զաստղէն ի փըրփուր։
Երբ փափուկ ձեռք ձեր
Ժողվեն փունջ յերեր
Սըփռեն յաւերս Հայաստանի սգակիր
Այն փշոտ վայրեր
Պճնազգեցիկ կը զարդարուին լուսալիր։
Երբ սիրտ ձեր միայն
Սիրոյ լոյս շողան
Խաւար վայրեր մեր հայրենեաց առնուն կեանք,
Սահմանադրութեան
Ջեռքերն յայնժամ հրաշք գործեն ու փրկանք

ԵՂԱՆԱԿ — Տէրունի Ղուկասեան
ԽՕՍՔ — Գ. Խ. Պիւլպիւլեան։
1872 մայիս 4 Աշակերտ փանոսեան վարժարանի

---

## 24. ՍԻՐ ԵՒ ՍԻՐՏ ՄԸ

Ի բարձանց Մասեաց գայ լոյս գեղեցիկ
Կուգայ 'ի ձեռին փունջ ծաղկանց փափկիկ
Բերէ զայն առ մեզ նուէր սրբազան
Ցիշատակ Հայուն սիրոյ միութեան
Սէր տանք միմեանց թէ սիրտ ունիմք համարիւն
Թէ սիրտ ունիմք մեք Հայուն
Ո՜վ եղբարք իմ Հարք որդիք պանդխտին

Արդ զի՞ կայք ելէք դուք յառաջ կուսին
Կնքեմք միմեանց հետ անդ-դաշն սիրոյն
Սահմանադրութիւն յանքակ միութիւն
Ձեռք տանք միմեանց թէ ձեռք ու-
նիմք համարիւն
Թէ ձեռք ունիմք մեք՝ Հայուն
Օ՜ն մեք ձեռն ՚ի ձեռն արշաւենք ուժ-
գին
Եւ տանք աւետիս մօրն Հայաստանին
Թէ հաշտ է երկինք հետ քոյ Հայերուն
Սրբէ քոյ աչաց ցօղիկ վշտագոյն
Ձայն տանք այսպէս թէ ձայն ու-
նիմք համարիւն
Թէ ձայն ունիմք մեք Հայուն ։

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Էփրիկ Ցովհաննէս-եան — Ա. Յ. Գալստամ-ձեան
1872 մայիս 5 — Աշակերտ Փանոսեան վարժարանի

———

## 25. ԼՈՒՍԻՆ

Անուստ վկայ մի է լուսնակ գիշերի
Հայաստանին փառաց ում լոյս իւր շողի
Երբ նա մթին վայրաց մէջ
Լալեօք կընէ ել և էջ ։
Հայկայ սիրուն աչքն է պայծառ լու-
սընկայն
Որ կը թանայ աւերակներն ամենայն
Երբ Հայը այն վայրաց մէջ
Լալեօք կընէ ել և էջ ։
Լուսնակ բեկեալ քնարն է Հայ մուսայի
Որ դարերով կերգէ զբաղդն հայրենի
Երբ Հայը զայն արտին մէջ
Լալեօք կընէ ել և էջ ։

Եղանակ — Խօսք
Վասիլուհի Աբրահամ-եան — Պետրոս Պէյ-լէրեան
1872 մայիս 4 — աշակերտ Փանոսեան վարժարանի

———

## 26. ԽՍ ԱԼ

Պսակ մի ունիմ ծաղկներով փափկիկ,
Պսակ մի սրտի սիրոյ գեղեցիկ.
Եւ երբոր Հայեր սահմանադրութեան
անուան կուտան փոյթ
Զանի խնդագին նուիրեմ ես ալ ։
*
Ձայն մի ունիմ ես մանկական փափուկ
Ձայն մի որդեկան կարօտ, և անձուկ.
Թէ Հայ շըթներէ սահմանադրութեան
երբ լսեմ դայլայլ
Անդ զանի յօժար նուիրեմ ես ալ ։
*
Պատրաստ սիրտ մը ունիմ վառ՝ ու բո-
ցագին,
Սիրտ մ՚է հայեցի սիրտ մ՚է պանդխտին
Երբ Հայկայ որդիք Սահմանադրու-
թեան խունկ ծխեն ծառայ,
Բոլորվառաւ զանի նուիրեմ ես ալ ։

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Պետրոս Ալիքսանեան — Նշան. Սոնեյան Միւղէնիձեան
1872 ապրիլ 27 — աշակերտ Փանոսեան վարժարանի

———

## 27. ՀԱՅՈՒՀԻՆ

Ծաղիկն ՚ի ծղին
Թօշած ՚ի դաշտին
Այն ինչ հանդչէր ցօղաբարձիկ դէմ
լուսնին
Գայ Հայուհին ձայնիկն ՚ի տաղ ձեռքն
՚ի դրօշ,
Երգել ծաղկին զանմահ անուն բայո-
րոշ
Սահմանադրութիւն
Աւետի՛ս Հայուն ։

* * *

Քնարն Եդեմին
Փշրած ՚ի գետին,
Կը ծածկուէր այն ինչ քօղով մը մթին.
Գայ Հայուհին զուարթադէմ ծիծաղ-
կոտ



Երգէ կենաց քնարին քաղցր առաւօտ
Սահմանադրութիւն
Աւետիս Հայուն

* * *

Արև ու լուսին
Հետ հետ նուաղին
Աւերակաց մէջ ուր մեր փառք կը
հանգչին.
Գայ Հայուհին յայնժամ ճակտէն իւր
նշոյլ
Վառէ փայլէ զԱրևն Հայոց ՚ի շողշող
Սահմանադրութիւն
Աւետիս Հայուն

* * *

Հրեշտակք Եդեմ շուրջ
Նուագ սուրբ ու լուրջ
Ահա՛ պաշտեն զՀայուհին անշշունչ,
Որ գայ յերկնից բերէ ընծայ առ մեզ
ՍԷՐ
Այն ոգին է Հայաստանի կենսաբեր
Սահմանադրութիւն
Աւետիս Հայուն ։

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Տիրուհի Ղուկասեան — Սիրական Սարգիս-եան
Աշա. Փա. վրժրնի.

———

## 28. ԲԱԺԱԿ ՄԸ

Բաժակ մը ունինք մեր ձեռքին մէջ
Բաժակ մ՚է այն սիրոյ անշէջ.
Պարպենք զանի մինչև յատակ,
Այն մեր կենացն է ըմպանակ.
Ըմպենք Հա՛յեր, կեցցէ՛ գոչեմք մենք
յօժար
Ազգն Հայոց, և մեր Սուլթան բարերար
Որ հովանեաց տակ
Կապեմք մենք պսակ
Սահմանադրութեան,
Ու Հայ ազգութեան ։

Բաժակ մը ունինք խառն ծաղկով,
Կենաց նեկտար մ՚է քաղցր ու զով.
Քամենք ՚ի կեանս մեր հայրենեաց,
Այն աղւոր ուխտն է մեր կենաց.
Ըմպենք Հա՛յեր, կեցցէ՛ գոչեմք մենք,
յօժար
Ազգն Հայոց, և մեր Սուլթան բարերար,
Որ հովանեաց տակ
Կապեմք մենք պսակ
Սահմանադրութեան,
Ու Հայ ազգութեան ։

Բաժակ մը ունինք մեղրով քաղցրիկ,
Լցուած ոգի մ՚է գեղեցիկ.
Խմենք զայն վասն Հայ որերոյն
Այն է պայման անկեղծ սիրոյն
Ըմպենք Հա՛յեր, կեցցէ՛ գոչեմք մենք
յօժար,
Ազգն Հայոց և մեր Սուլթան բարերար,
Որ հովանեաց տակ
Կապենք մենք պսակ
Սահմանադրութեան
Ու Հայ ազգութեան.

Բաժակ մը ունինք փրփրած յոյժ,
Եռանդ աշխոյժ սէր ապաժոյժ.
Ո՛հ այն բաժակ մ՚է սրբութեան,
Ազատ կենաց ոգին է այն,
Ըմպենք Հա՛յեր, կեցցէ՛ գոչեմք մենք
յօժար,
Ազգն Հայոց, և մեր Սուլթան բարերար,
Որ հովանեաց տակ
Կապենք մենք պսակ
Սահմանադրութեան,
Ու Հայ ազգութեան ։

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Ղամբիկ Ցարութիւնեան — Սերովբէ Մ. Թիւ-րապեան
1872 մայիս 1 — աշակերտ Փանոսեան վարժարանի

———

### 29 · ՆՈՐ ԿԵԱՆՔ

Լռէ՛ դու քնար, կա՛ց զեփիւռ հեշտին.
Որ երգէք զաշխարհն վկայք գեղեցկին
Պահ մ՚հոգւոյս առջև կացէ՛ք վշտահար
Որ ցօղով պաշտէ հայրենի քնար .
Կացէ՛ք որ ձեզ հետ Սահմանադրութիւն
Յարդարէ բեկ բեկ քնարը Հայուն ։

Գարուն ու ծաղիկ կացէ՛ք դարուց ծոց
Ուր ձեզ ծածկի ազդ՝ մ՚ու ողբ ու կոծ
Պահ մ՚հոգւոյս առջև կացէ՛ք ամայի
Որ ցօղով պաշտէ գարուն Հայրենի .
Կացէ՛ք որ ձեզ հետ Սահմանադրութիւն
Բանայ երփնագեղ ծաղիկը Հայուն.

Կացէ՛ք գիշերին դուք աչեր վառ վառ
Խորոց ու չիրմաց նուագ անբարբառ.
Կացէ՛ք ամպամած հոգւոյս դէմ յերեր
Որ ցօղով պաշտէ Հայրենեաց աստղեր.
Կացէ՛ք որ ձեզ հետ Սահմանադրութիւն
Շողէ մթապատ աստղերը Հայուն ։

Աստուած համայնից՝ հզօրդ որ էն .
Թող Սերոբ՝ Քերոբ՝ ալելուք լռեն
Դէմ հոգւոյս որ յար ցօղովլայ անյագ
Քոյ Հայոց աւեր աշխարհին նուագ
Լռէ՛ք որ մինչև Սահմանադրութիւն
Բերէ ներդաշնակ մեր կենաց Հայուն ։

Լոյս՝ զեփիւռ՝ քնար՝ երկինք՝ յիմ սրտէս
Գարուն ու ծաղիկ եկէ՛ք ի հանդէս .
Փայլեցէք ազատ այլ հոգւոյս առջև
Որ երգօք պաշտէ հայրենեացս արև
Եկէ՛ք հա՛բերաւ Սահմանադրութիւն
Նոր կեանք ու նոր փառք, նոր աշխարհք Հայուն ։

1872 մայիս 1

| ԵՂԱՆԱԿ | ԽՕՍՔ |
|---|---|
| Ն. Ս. Թաշճեան | Ս. Հ. Մ. Ֆէլէկեան |

### 30 · ՄԱՐՇ
ԱԳԱՊԵԱՆ Վ.ՐԺԱՐԱՆԻ

Ժամ է արդ Ագապեանք
Յառաջ վեհ և աշխոյժ ,
Ըն լուծենք չղթաներ
Դերութեան դարաւոր .
Աչկունք կայտառ դէմք քաջասիրտ
Կազմենք գունդեր փառաց անյաղթ .
Հայրենեաց ի սուրբ սէր
Ուսմանց տուր ի ձեռին
Սրանանք լուսավառ
Աջ ի յաջ անվեհեր ։
Կուսանք Հայոց և դուք մեզ հետ
Օն ի հանդէս ելէք ձայն տուք
Ցուցէք հանուրց Հայուհիք չեն անզօր.
Նոր Հայաստան կանգնի ազատ
Եւ հայութիւն ի շուք իւր յաւերժ ։

| ԵՂԱՆԱԿ | ԽՕՍՔ |
|---|---|
| Ն. Թաշճեան | Կ. Պաղճեան |

### 31 · ՄԱՐՇ
ՓԱՆՈՍԵԱՆ Վ.ԱՐԺԱՐԱՆԻ

Օն անդր յառաջ փանոսեանք
Յառաջ ի փոյթ անվեհեր
Հայկեան փառացն յասպարէզ
Խնդրել ջանից մրցանակ ։
Օն լուսոյ վեհ դրօշուն դու զինուորք
Զէն զձեռք իմաստից արկեալ կուռ
Հապ՝ արիք փութացէք
Դէմ գոռ թշնամւոյն .
Ձեզ մնայ յաղթանակ
Այս դարուս պերճ փառաց
Քաջալանջ դիմեցէք
Ի տրոփ աշխոյժ և սիրտ հզօր ։

| ԵՂԱՆԱԿ | ԽՕՍՔ |
|---|---|
| Ն. Թաշճեան | Կ. Պաղճեան |

### 32 · ՀՐԱԺԵՇՏ

Բարեաւ մնա, Հայրենիք
Հատոր սրտիս տխուր
Ոհ, յիշատակ քո սիրուն
Հոգւոյս ազդէ բերկրանք .



Թէ անոյշ ձեռք օտար
Ըզքեզ յինէն բաժնեն,
Այլ սէր քոյին մինչ իսպառ
Վառի յիս, Հայաստան ։

*

Բարեաւ մնա, Հայրենիք
Որրան քաջաց Հայոց
Ոհ, զեփիւռիդ շունչ անոյշ
Ցրուէ սրտից թախիծ ։
Թէ սուր, աւեր թշնամւոյն
Բառնան ի քէն զորդիս
Այլ սիրտ նոցա քո յանուն
Արծարծի, Հայաստան ։

*

Բարեաւ մնա, Հայրենիք
Վեհավայր հրաշից
Ոհ, վտակաց քոց մրմունջ
Հոգւոյ վանէ հառաչ ։
Թէ տարագիր մեք անոք
Մնամք յաշխարհ օտար
Այլ ոչ բնաւ մոռասցեն
Հայք զիւրեանցն Հայաստան ։

| ԵՂԱՆԱԿ | ԽՕՍՔ |
|---|---|
| Եւրոպական | Կ. Պաղճեան |

### 33 · ԱՂՕԹՔ ԿՈՒՍԻՆ

Լուր երկին
Լուր ինձ ի բարձանց քոց գահոյից
Ակնարկ գթոյդ իջցէ փութով
Առ զաւակունս բարձեալ յիմ գըրկաց
Զի անտէրունչ յերկիր օտարաց
Ոհ, Թափառին սիրտ թախիծ ։
Գըթա, Երկինք, և լեր նոցա միշտ
Յոյս փրկութեան բիւր աղէտից ։

| ԵՂԱՆԱԿ | ԽՕՍՔ |
|---|---|
| Շոտլեա ժերմանացւոյն | Կ. Պաղճեան |

### 34 · ԱՌԱՒՕՏ

Արփին պայծառ
Ծագի յաշխարհ
Եւ աստեղաց բոյլք լուսավառ
Խոյս տան փութով, մեկնի խաւար ,
Փայլին ցօղոյ շաղք երփներանգ ։
Թռչունք յայերս
Քաղցրիկ յաւաչ
Յարփւոյն ի շող աստ անդ ի պար
Ջանեն զուարթ բիւր դայլայլիկ
Ընդ բնութեան գեղոյ նոր զարդ ։
Զեփիւռ անոյշ
Շընչէ թեթև
Ծաղկանց ի փունջ բազմաբուրեան
Քաղցրածաւալ ի դաշտ ի սար
Սփռէ նրբին բոյր բազմազան ։
Հապա և մեք
Քորք նուագելիք
Ի խումբ ի պար թռչնոց հանգոյն
Օն երգեսցուք նուագս ուրախ
Յողջոյն լուսոյ փառաց էին ։

| Եղանակ Եւրոպական | Խօսք Կ. Պաղճեան |
|---|---|

### 35 · ՀԱՌԱՋՔ
Ի ՏԱՀՆ ՎԱՐԴԱՆԱՑ

Օն սլացի մեր հառաչ
Ի տխրական սրտէ
յԱւարայրն այն վեհապանծ
Ուր անկաւ քաջ Վարդան
Յանմեղաց արեան մրէժ .
Եւ խրոխտ Սասանեան
Գումարտակ ահեղագոչ
Կորեաւ զերթ շանթահար ։
Անդ Վարդանայ սուր սուսեր
Ճօճայր դէմ թշնամւոյն
Աչք հրացայտ սիրտ յեռանդ
Գոչէր ազգ հայրենիք .
Ազատութեան պերճ դրօշ
Պարզեցաւ ի Մասիս
Եւ Հայաստան մեր սիրուն
Զարթեաւ ի ձայն փառաց ։
Այլ ով բաղդին սեւադէմ
Գուժեաց ձայն տխրական

Մեռաւ Վարդան քաջաց պետ
Կորեաւ յոյս հայրենեաց.
Եւ ընդ բնաւ Հայաստան
Սփռեցաւ սուգ և կոծ
Աւա՜ղ, ննջեաց անյաղթ
Հայկազանց վեհ պաշտպան:
Ո՛ն դու քնար Հայկական
Ի սնար Վարդանայ
Նուագս հնչեա տրտմագին
Ողբալ զորոյն հանդիստ:
Կուսանք Հայոց Նազելիք
Զարթիք ի թմբոյն ողորմ
Լացէք զայն նահատակ
Հայոց պայծառ արեւ:

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Եւրոպական — Կ. Պաղճեան

## 36. ՑԱՅՑԵԼՍ

Վսեմ. Իգնաթիէֆ զօրավարին և Տիկնոջն ի պարտէզն Չիֆ-Սույի յաւուր տօնախմբութեան

Ազգ. Սահմ. Հայոց ի պատիւ Ազատեանց
30 մայիս 1871

Ցնծումբ ի վեհ առաքինեաց
Ջերմ լուսալիր ակն ի պսակ
Մարդասիրին բարձր ի փառս
Փայլի անզոյգ անուն վսեմ.
Եւ քոյդ, Տիկին, պերճ գործոց հոյլ
Ի նոյն անմահ յաւէժացի:
Պաշտպան մեր Տիկին
Վեհ Իգնաթիէֆ
Կեցցէ անսասան
Փառօք մշտնջեան:
Ի փոյթ, ի սէր լուսոյ ուսմանց
Եւ սիրտ վեհիդ խայտայ աշխոյժ.
Ցոր զԱզգայեան Արմենուհիս
Քոյդ խնամոց պերճ հովանեաւ,
Հաճեցար Դու, ո Տիրուհիդ
Առնել ցկեանս քեզ օրհներգու.
Կեցցէ մեր պաշտպան
Տիկին Իգնաթիէֆ

Որոյ պերճ խնամք
Մեզ միշտ քաջալեր:
Ընդ պերճ այցելս Ձեր սիրալիր
Հանդիսավայրն այն գեղաշուք
Որ սանուհեացս զուարթ երամ
Ի խինդ ի պար կայտռէր խայտայր.
Վեհ Ամոլիդ տեսիլ փայլուն
Ցաւել զվառս մեր խնծոյից:
Կեցջիք անսասան
Փառօք մշտնջեան
Եւ Ձերդ պարգեւաց
Ի մէնջ յիշատակ
Յաւէտ գովեստիւք
Պահեսցի անջինջ:

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Տէրունի Ղուկասեան — Կ. Պաղճեան

37. Երկոտասաներորդ Տարեդարձ
Ազգ. Սահմ. Հայոց. 28 Մայիս 1872

## ԽՐԱԽՈՅՍ Ի ՄԻՈՒԹԻՒՆ

Կուսանք Հայոց յառաջ ի հանդէս
Տանն Հայկայ տուք արդ հրաւէր
Փառացն է այս մեզ սուրբ ասպարէզ
Փութամք յառաջ ի սիրտ անվեհեր:
Բաւ է ալ մեզ հեծել տխուր
Վատ գերութեան շղթայից տակ
Ազատութեան ըլլանք զինուոր
Փութով գտնել մեր լոյսն ու փառք.
Սիրոյ ձայներ գեղգեղեն
Հայոց այս օրն ողջունեն
Այն որ տուաւ խրախոյս
Ծնաւ նոր կեանք և նոր լոյս:
Բաղդին դարաւոր թշուառ դատակնիք
Որ ուժգին ճնշէ ճակատն հէք Հայուն
Գթայ ի բարձանց սրբէ զայն Երկինք
Թէ Հայն ուխտէ միշտ ՍԷՐ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆ:

Եղանակ — Խօսք
Ն. Թաշճեան — Կ. Պաղճեան



## 38. ԳԻՇԵՐ

Արեւմտեան ծիրանիք
Ամփոփին խաղաղիկ
Լուսին յուշիկ արդ ցայտէ
Արծաթափայլ ճաճանչ.
Ծաւալ աստեղք ի յեթեր
Փայլ փայլ վառ վառ շողշողան
Ծաղկին լուսով ձորք դաշտք
Գիշեր է այն:

*

Օդաշրջիկ հաւուց պարք
Գնան վաղ ի բունիկ
Լերանց լռեն արձագանք
Քընէ և խոնջ սոխակ.
Հովուին փողոյ ձայն մեղմիկ
Կոչէ զանդեայն ի հանդիստ
Անուշակ գարնայնի
Գիշեր է այն:

Եղանակ Եւրոպական — Խօսք Կ. Պաղճեան

## 38. ՈՂՋՈՅՆ
### ԱՌ ՊԱՆԴՈՒԽՏՆ

Ի ծաղկադեղ պերճ դալարիս
Պանդուխտն իւր ուշ ի հայրենիս
Օդայածիկ հաւուցն ի պար
Ման գայ տխուր աչքն ի խոնարհ:

* * *

Ողջոյն ընդ քեզ, պանդուխտ, ասեն
Քանի՞ չքնաղ սա վայրերն են
Տես սա վտակ ականակիտ
Մարգ ու ծաղկեր ջրէ վճիտ:

* * *

Էհ, պանդխտի մի տայք ողջոյն
Մի, այդ ողջոյն է գանձագոյն
Մի՛ զվայրացդ խօսիք ընդ իս
Նոքա վէրքեր բանան սրտիս.

* * *

Ողջոյն, ահ, այն ցօղ զովարար
Զոր հայրենիք տայ սիրավառ
Ողջոյն այն սրտի գեղ է
Այն պանդխտին յունկն հնչէ.

* * *

Ահ, Հայրենիք սրտիս հատոր
Ի քէն հեռի՞ ես աստանօր
Միթէ վայելքդ քոյին վայրաց
Թողցի՞ն ընդ միշտ զիս օտարաց.

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Տէրունի Ղուկասեան — Կ. Պաղճեան

## 39. ՀԱՌԱՉՔ
### Ի ՇԻՐԻՄ ԿՈՒՍԻՆ

Ով դու չքնաղ անբիծ շուշան
Մա ուան ամպէն քօղուած արեւ
Է՞ր դու վերջին եւ տուր քո փայլ
Եւ լուսաթոյր կեանքդ ի խաւար
Մահահամբոյր շիրմիդ վերեւ
Ոհ, խզեցաւ քնարիդ լար:

* * *

Բարէ զարթիր, ո կոյս փափկիկ
Պսակ հիւսեմք քեզ երկնափայլ
Տես, ցուրտ շիրմիդ քով սրտաբեկ
Քանի՛ տխուր ձօնին հառաչք.
Ոսկեծղիկ դու վարդ փթթեալ
Զարթիր սփռէ բոյրդ անուշակ:

* * *

Բայց... կոյսն ասաց իւր հուսկ ողջոյն
Գողտրիկ գրրկոց եւ հրաժեշտ
Ոհ, հրախանդ աչկունքն աղու
Հանդեան խաւար, այլ դառն ի քուն.
Եւ մեր յաչաց արտօսր վէտ վէտ
Ցօղի ի կոյսն աշխարհաչու.

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Մեծարեան Տօփալեան — Կ. ՊԱՂՃԵԱՆ

## 40. ՊԱՆԴՈՒԽՏՆ

Թէ Հայրենեաց անուշ դրրկէն
Հողմունք ի բաց զիս կորզեցին
Ուր օդ ազատ կենսանորոգ
Ոհ, չընչէի կայտառ գիտօք:

Եւ բոյլք ծաղկանց երփնանակ
Շուրջ պար արկեալ սիրուն գեղով
Զոնեն աստ անդ բոյր անուշակ,
Ցրուել թախիծ սրտից տխուր։
Թէ արտալած յոտար ափունս
Քամեմ արտասունք իբիւր հառաչ
Եւ յիշատակ իմ սիրելեաց
Խամրէ զիմ ոգի.
Աւաղ ոհ, արդեօք տեսի՞ց դարձեալ
Զերկիր բնիկ իմ ցանկալի։

Եղանակ Եւրոպական — Խօսք Կ. Պաղձեան

———

41. Ի վերադարձ յուղեւորութենէ վսեմ. Իկնաթիէֆ զօրապետին և Տիկնոջն

Ի խինդ ի սրտի բաղխեն զուարթ
Սիրտք Ագապեան Արմենուհեաց
Ընդ ցանկալի դարձ ձեր, Տիկին,
Յոր ընդ երկար սանուցս երամ
Կայր ակնապիշ ձեռն ի յերկին.
Բարեաւ զձեզ տեսաք անդրէն
Ո մեր Պաշտպան վեհ բարերարք
Իկնաթիէֆ Ամոլք ընտիր.
Մաղթեմք յերկնից ի խոր սրտէ
Ձեզ անսասաց աւուրս փառաց։
Եւ մեք սանունք Ագապեան
Խնամոց ձեր հովանեաւ
Լիցուք ընդ միշտ յուսալից
Յառաջդիմել ի Բարիս։

Եղանակ Տիրուհի Ղուկասեան — Խօսք Կ. Պաղձեան

———

## 42. ԵՐԳ
### Ի ՀԱՆԴԷՍ ԲԱՑՄԱՆ ՓԱՆՈՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ոն ի հանդէս մանկունք Հայկայ
Ելէք ի նորս այս վեհավայր
Ուր հրաւէր կարդայ ձեր բաղդ
Ուր գիտութեանց փայլի փառ. ջահ.
Ոն անդր յառաջ, մի վեհերոտ
Կոչէ զձեզ դարուս նոր կեանք.
Աստղ մի պայծառ. շողաց յերկինս
Այն է կենաց ձեր լուսատու.
Թէ Հայութեան որդի կենաց
Հէք յիշատակն շարժէ ձեր սիրտ,
Ոն գործեցէք, գործն է միայն
Փրկանքն Հայուն, լոյսն Հայուն.
Ձեր սուրբ քրտանց մէն մի կաթիլ
Տան արդասիք հազար և բիւր.
Ի փոյթ, ժամ է, հապա ձայն տուք
Ազատութեան ի սիրտ զուարթ.
Կեցցէ վեհափառ
ԱՊՏԻՒԼ ԱԶԻԶ ԽԱՆ
ՍՈՒԼԹԱՆ մեր յամայր.
Նորա շնորհիւ
Թող փայլեցընեն
Փութաջան գործքեր
ՓԱՆՈՍԵԱՆ այս վեհ
Ազատ ՎԱՐԺԱՐԱՆ.

ԵՂԱՆԱԿ Մէօրիքեան Տատուրեան — ԽՕՍՔ Կ. Պաղձեան

———

## 43. Ի ՆՈՅՆ
### Ի ԴԻՄԱՑ ԱԳԱՊԵԱՆՑ

Զի՞նչ այլ քաղցրիկ քան զհանդէս
Ուսմանց լուսոյ նոր տաճարիս
Ոն փանոսեան դուք նոր սանունք
Ելէք ի նորս այս ասպարէզ.
Ուր մարդկութիւնն կանգնի անդրէն
Գործէ զուարթ, ազատ և վեհ.
Ո հայրենեաց կայտառ որդիք
Ընդ Ագապեանս ջանացէք ժիր.
Մեզմով Հայուն վերածնի փառք
Եւ ապագայն առնու նոր կեանք.
Դուք փանոսեան, մեք Ագապեան
Ամենքս իբրև որդիք համհայր
Ոն թև ի թև դիմենք յառաջ
Անխոնջ Տեսչին մեր խնամօք.
Առնունք ոգի և խրախոյս
Դարուս թևով խաղանք յառաջ։
Կեցցէ մեր ՍՈՒԼԹԱՆ
ԱՊՏԻՒԼ ԱԶԻԶ ԽԱՆ



Որոյ շնորհիւ
Հայուն անշուշտ բաղդ
Ծնաւ և նոր կեանք.
Թող և մեր վաստակք
ՓԱՆՈՍԵԱՆ յոյսեր
Լիուն աներեր։

ԵՂԱՆԱԿ Ն. Թաշճեան — ԽՕՍՔ Կ. Պաղձեան

———

## 44. ՊԱՆԴՈՒԽՏՆ
### ԱՌ ԼՈՒՍՆԱԿՆ

Ով իմ լուսնակ գեղեցիկ գիշերոյն ուղղեակ
Դու յաստղերուն պայծառ բոյլս իբրու զօրապետ
Ի ծով անհուն եթերին ծաւալիս լուսազգեստ
Պանդխտին բիւր խղձերուն դու յոյս միայնակ։
Որ գիշերոյն վանես մէգ լուսոյդ կոհակօք
Դաշտաց, հովտաց, սարերու սփռես շող վճիտ
Մի պանդխտին ճաճանչից զրկեր տըխուր սիրտ
Որ տարագիր կայ խղճալ. աստ հեգ և անօք
Հայրենի սիրոյն յաւանդ վառեալ յաբաժամ։
Ո՜հ, գիշերին դու պարծանք, երթ երփ յայն սուրբ վայր
Ուր իմ վեհ քաջազանց կան աճիւնք փարելի.
Անդ անմուաց պանդխտին բերի սիրտ և ոգի.
Անդ և դու սփռեա, Լուսնակ, լուսոյդ Ոսկիան։
Ո՛վ դշխոյդ եւադէմ յաստեղց առեալ պար
Որդեկորոյս իմ հէք մոր վշտագին աչաց
Թող ջնջին արտասունք ի քոյդ տես փառաց.
Եւ պանդխտիս սիրտ համբոյր տուր նմա անվթար
Ո՜հ, թէ փարիմ միանգամ նորա հողոյն ցանկալի։

ԵՂԱՆԱԿ Եւրոպական — ԽՕՍՔ Կ. Պաղձեան

———

## 45. ԵՐԳ ՀԱՅՐԵՆԻ

Այրարատեան նոր վեհաղունք
Հայ հայրենեաց ելէք ի տես
Ուր մարտաղոտ ձեր դիւցազանց
Կանգնին արձանք յաղթանակաց։
Ոն սիրտ ի սիրտ և ձեռն ի ձեռն
Քաջաց երկրին վառեալ յոգի
Դիմեմք աշխոյժ, սուրամբ ի փոյթ
Հայաստանի տալ փառս և լոյս։
Անդ ուր երբեմն յԱզատ Մասիս
Ազատութեան պարզէր դրօշ,
Եւ արձագանք փառաց վսեմ
Գոռայր վերին փառաց յաւէր։
Հապա՛ որդիք Արշակունեան
Ժամ է արդ, ձայն տուք սպաս
«Դառնայ անդրէն հզօրագեղ
Հայաստանի գարուն զուարթ»։

Եղանակ ՏԻՐՈՒՀԻ ՂՈՒԿԱՍԵԱՆ — Խօսք Կ. ՊԱՂՁԵԱՆ

———

## 46 ԱՌ ԾԻԾԱՌՆ

Ծիծառն աղնիւ քո պէս
Զէք պանդխտիս մխիթար
Գարնան զըւարանց աւետաւ
Դու ես զուարթ թռչնիկ։
Ո՜, ինչ քաղցրիկ ձայնես
Ողջո՞յն բերես Հայրենեաց.
Ես տարագիր անուշակ
Քո երգոց ակն ունիմ։
Կաթ մի դէթ արտասուաց
Տար յորրան իմ մանկութեան
Ի ծաղկունս սփռել դալար
Ցանկալի Հայրենեաց։

Եղանակ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ — Խօսք Կ. ՊԱՂՁԵԱՆ

———

## 47. ՔՆԱՐ ԿՈՒՍԻՆ

Է՞ր դու արդ պէս բախկ հեծես վշտագին
Քնար փափկիկ դու ողբերգ
Է՞ր ոչ հընչեն մեղմիկ թելերդ դաշնաձայն

38496-67
Պետական Գրադարան Гос. Библиотека ՀԱՍՌ-Арм ССР

Ո՞ր այն երգոյդ անուշ ձայներ։
Ո՜ն հեշտ ախորժ հնչէր յորդ քոց հնչիւն
Երգէ զուարթ սրտիս ի խինդ․
Զի քո ձայնն թըռին ողբեր աղեկէզ
Տարագրելոյս ի Հայրենեաց։
Թէ քո պերճ փառք ձեռք օտարին անողորմ
Ո՛հ, կորուսին անյայտ,
Թէ մնացան սուսերք քընքուշ քո մատանց
Այլ քեզ պահի ոգի վըսեմ։
Զարթի՛ր, աղէ՛ քոց սիրողաց կայ ի տես
Դէմք ի ժըպիտ և սիրտ յեռանդ.
Տես զուարթունն առ քեզ յերկնից հոլաթե.
Աւետաբեր գայ նոր փառաց։

Եղանակ Գերմանական — Խօսք Կ. Պաղճեան

---

48.
Ի ՇԻՐԻՄՍ
ՔԱՋԱԶԱՆՑ ՀԱՅՈՑ

Զի՞ ձեզ․․․։
Սրբատեսիլ շիրիմք
Հայրենասէր քաջազանց
Տեսէք. ի՞նչ մըրմունջ հանեն հանդարտիկ
Ողջոյն, ողջոյն, սիրուն աճիւնք
Յոյս և քաջալեր հայրենի փառաց։
Աչք մեր հոսեն յորդ արտասուաց
Երկնեն խընդ[illegible]ց և ցաւագին․
Հեծեն հիմունք հոգւոյ տըխուր,
Եւ սիրտք յարեան ճապաղ ճըմլին.
Նախնեաց հանդէպ շիրմացն ի լուռ
Ակնապիշ կամք ի յերկիր։
Մի՛ դուք աստանօր ձօնէք ողորմիկ
Այդ հառաչ ողբերգ ի բարբառ
Ցուցել սըգով խաղաղական շիրմաց հանդիսու
Հի՞մ վըրէժ գոչեն կոյանք մեր նախնեաց
Հայրենեաց,
Որ յաւէր և ՚ի կործան սեւաղէմ անկամահուն
Թէ՛ երբեմն ձեր հատու շողային սուսերք
Այժմ և սէր եռանդուն շընչէ մեր ի լո՜յս...
Ո՛ն անդր ընդէ՞ր ձայն ողբերգու
Ի ռամկեան սուտ է թախիծ
Է՞ր քոջ ոգեց մատունք կուսին
Նուագս հնչեն լալեաց տրտմիկ․
Այլ աշխարհացին աչք, մինչեւ ձեր ողբոց
Անհետասցի ի մէնջ խայտառ,
Լսել նախնեաց զուարթ բարբառ,

«Որդիք տարագիր Հայոց աշխարհին
Ո՛ պար արկեալ աստ սըգայք յողբ և կոծ։
Ոչ. ոչ այդ լալիք են և ոչ ձեզ աւէտք
Կուշ մեր շիրմաց արտասուք վշտագին.
Այլ զարթիք, զարթ ք ի սէր և ի յոյս
Ծագեաց ձեզ փառաց նոր արփի նոր լոյս»։

Եղանակ Ն. Ս. ԹԱՇՃԵԱՆ — Խօսք Կ. ՊԱՂՃԵԱՆ

---

49. ՕՆ Ի ԼՈՅՍ

Ելէք, Հայեր, սրանանք օն ի լոյս
Զի այս մեր փառք, կեանք օն մի դըլոյք
Օտարէն չիք փրկութեան յոյս
Իործել անձանձիր մեր բազուկ ու մեր
պարտք,
Օ՛ն լուսոյ պարզենք դրօշ Մասեաց
բարձր կատար
Ելէք, Հայեր, սրանանք օն ի լոյս
Հոն գտնենք երկոց մեր արդասիք
Զի լքանինք ի հեշտ հաճոյս
Որ մարդկութեան ջնջէ յարգ ու պար-
տիք
Չթողունք ալ ամեն ինչ, և դիմենք
ի լոյս։
Ելէք, Հայեր, սրանանք օն ՚ի լոյս
Ձայնենք հրաւէր սուրբ ազատութեան
Ի թշնամւոյն տես չտանք խոյս
Ըղձենք մեր ճակտէն կնիք վատութեան,
Ցանն թէ Հայք սիրեն զլոյս, և դիմեն
ի լոյս։

ԵՂԱՆԱԿ Ներոպական — ԽՕՍՔ Կ. Պաղճեան

---

50. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Կենաց վաղ մ՚ունինք հատով իւր
անուշ,
Որդոյ ոխակին նուագն է քնքուշ,
Ցաւոց է այն գեղ, սրտերուն ոգի,
Ցնծայ Հայութիւն, ու անով բերկրի.
Այն փարդն է Հայուն
Սահմանադրութիւն։



Է մեր մի քնար ձայնով գեղեցիկ,
Մ իրավառ նուագ ողբոց են լալիք.
Ա ղեկեզ աչեր յայն բանան ուրախ,
Հ տյուն վշտաբեկ սիրտ յառնէ վաղվաղ
Այն քնար Հայուն
Սահմանադրութիւն։
Մ ատաղ գառ մ՚ունինք մանկիկ ու
անմեղ.
Ա րիւոյն պէս վառ վառ աչերն են չքեղ.
Ն ա կուգայ բառնալ դատակնիքն ող-
բոց.
Ա սուածոյ կողմէն փրկիչ մ՚է Հայոց.
Այն գառն է Հայուն
Սահմանադրութիւն։
Դ ար մ՚ունինք կենաց պատմութիւն
մը նոր.
Ր ախարեր քրտանց ծնունդ փառաւոր.
Ո ր մայիս քան ուլթի ծաղկանց հետ.
Ի այսօր բերէ մեզ պսակ կենսաւէտ.
Այն դարն է Հայուն
Սահմանադրութիւն.
Թ ուչնիկ մի սիրոյ ունիմք հոգեձայն
Ի սիրտ տարագիր խօսի Հայութեան.
Ի իւսեալ է սիրուն ոսկեփայլ փետրով
Ն ա յոյս տայ կենաց, ու սրտից գորով
Թռչնիկն է Հայուն
Սահմանադրութիւն։

Եղանակ Պետրոս Ալեքսանեան — Խօսք Սիմոն Մինասեան

---

51. ՇՈՒՇԱՆՆ ՇԱՒԱՐՇԱՆԱՅ

Կուսանք Հայոց նոր շուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան
Պսծառ պատկեր կուսանաց
Հայոց պսակ պարծանաց
Ճակատն ՚ի քող խորոտիկ
Ցանած ի հով խոպոպիկ
Տարակ տոտամբ մանտրուքայլ
Մանգայ ՚ի դաշտ ցօղափայլ
Մեղր կաթէ շրթներուն
Փայլկլտան աչքըն սիրուն
Կուսանք Հայոց նոր շուշան
Տեսէք ՚ի դաշտ Շաւարշան։
Հիւսիւսային մեր աստղիկ
Հայաստանեայց գեղեցիկ
Արեւանման հայելի
Արքայադստրիկ նազելի
Սիրասունունդն Սանդուխտ
Որում արև ելքն ու մուտ
Փափաքէին սրտմաշուք
Հա՛րսն է եղեր չն ընհաշուք
Կուսանք Հայուն նոր շուշան
Տեսէք ՚ի դաշտ Շաւարշան Աւայն։

ԵՂԱՆԱԿ Եղիա Տիրացուեան — ԽՕՍՔ Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան

---

52. ԵՐԳ
Ի ԴԷՄՍ ՔԱՋԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ

Հայրենասէր Արամեանք,
Զի՞ կայք ի քուն ընկղմեալ.
Բացէ՛ք զաչս ձեր հոգեկան,
Տեսէք զօրս ձեր ժամանեալ.
Ո՞ւր են փառք, ձիր ձեր նախնեաց,
Ո՞ւր են պատիւ վեհ արանց.
Ուր զաշխարհ Հայաստանեայց,
Լցին փառօք դիւցազանց։
Յառաջ մատիք ինձ լսել,
Շառաւիղք քաջին Հայկայ.
Ես կամիմ ձեզ այդ պատմել,
Զազգասէր գործ Վարդանայ։
Որ զգլուխ իւր կենօք չափ,
Եդ ի փրկանս իւր ազգի,
Եւ կնքեալ զայն իւր արեամբ.
Եղև փրկիչ Հայրենի։
Սուրբ խաչ փայլեաց Փրկչական,
Հոգւոց ազգիս Հայկական.
Պահեա զմեզ տէր Աստուած,
Եւ աշխարհիս փորձանաց։

Եղանակ Մելքոնեան Տարոնեան — Քնար Հայկական [illegible]

### 53. Ի ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

Ազգային Սահմանադրութեան Հայոց

1871 Մայիս 30

Մասեաց ազատ բարձր սարէն
Գայ աղաւնին յոյս Հայուն
Զուարթ 'ի խինդ ձեզ հրաւէր
Սուրբ միութեան կարդայ, Հայեր.
Օն միասիրտ եկէք յողջոյն
Զի այս ձեր կեանք, ձեր փառք և յոյս
Հրեշտակդ յուսոյ, ողջոյն քեզ ողջոյն
Սիրավառ դիմօք կուտայ Հայոց տուն
Այս մեզ պատգամ մեծ զուարթնոյն
Զարթիք, Հայեր, զարթիք 'ի լոյս
Ծագեց պայծառ արուսեակ նոր
Հէք հայութեան բերաւ նոր օր.
Ալ բաւ է, բաւ այսչափ տարուան
Սրբտի, մեռաց խոր թմբրութիւն
Արիք գործեցէք, մէկ սիրտ ու մէկ կամք
Խօսքն է ապարդիւն, գործքն է ձեր փրկանք,
Օն յիշեցէք դուք անմեհներ
Ձեր քաջազանց արի գործքեր
Ոչ թէ մի օր, այլ միշտ ուժգին
Հնչեն ձայներ այդ սուրբ խորքէն
Որ սասսի ուժն վատ թշնամւոյն
Փշրին հիմանց թումբեր անհաւն
Հրեշտակ զուարթ, պատգամդ է քաղցրիկ
Հապա սլացիր Հայուն մօրն 'ի գիրկ:

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Ն. Թաշճեան — Կ. Պաղճեան

---

### 54. ԽՐԱԽՈՅՍ

ՅԱԳԱՊԵԱՆ ՍԱՆՈՒՀԻՍ

Մի՛ դանդաղիր, հայկուհիդ,
Ժամ է ձայն տուր քնարիդ՝
Ձայն մ'որ Հայը կըսփոփէ
Բայց այն որ սէր կը հնչէ,
Օն սանուհիդ եւ երգէ,
Ձեռք մ'որ զքեզ պաշտպանէ։
Սէրն է այն ձեռք, նաեւ գութ
Նա իսկ անդուլ ջան ու փոյթ
Նա, Սպարտուհի՛դ Ագապեան
Քեզ կուտայ զէն ու վահան
Երգէ սիրուն սանուհիդ
Զարկ ու վանէ թշնամիդ
Քո թշնամին նախանձն է
Նորա վրէժն այն ձեռքն է
Հայ պարտէզին դու վարդն ես
Եւ քու բուրմունքդ ուսմունքն է
Սիրէ՛ սիրուն սանուհիդ
Այն ձեռքն որ լոյս է մտքիդ։

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Տիրունի Ղուկասեան — Ն. Մ. Շիշմանեան

---

### 55. Ողջոյն Սիրոյ Եղբայրական

Բարեա՛ւ եկիք դուք՝ ո՛վ Հայոց կուսանք,
Ո՛վ իմն Հայրենեաց Մուսայք երգեցիկ,
Առէք մեր ողջոյն սուրբ Սիրոյ գըրգանք.
Մխիթա՛րք Հայոց՝ դուք բարեա՛ւ եկիք,
Ագապեան սաներ ձեռք տուէք մեզի,
Ձեր ձեռքը փրկանքն է Հայ մանկութեան
փրկանք՝ որ ձեզմով միայն սնանի,
Այն է Հայրենեաց պայծառ ապագայն։

Եդեմի վայրին անբիծ ծաղիկներ,
Ահա կը բուրէ ձեր հոտը քաղցրիկ,
Ո՛րով կը հրճուին Պէզճեանս հէք սաներ,
Հրեշտակք Հայոց դուք բարեա՛ւ եկիք,
Ագապեան սաներ ձեռք տուէք մեզի,
Ձեր ձեռքը փրկանքն է Հայ մանկութեան
փրկանք՝ որ ձեզմով միայն սնանի,
Այն է Հայրենեաց պայծառ ապագայն։

Թէ երբ առնէք թեւ թռչիք Հայաստան,



Ու մենք ալ ձեզ հետ այն տեղը հասնինք.
Ո՛հ յայնժամ Մամասեաց գիւղէն սիրած այն
կողջունեմք զձեզ թէ, դուք կե՛նք բերիք.
Ագապեան սաներ ձեռք տուէք մեզի.
Մենք ու դուք ըլլանք փրկանք Հայութեան
փրկանք՝ որ մեզմով միայն սնանի.
Այն է Հայրենեաց պայծառ ապագայն։

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Մէօլիւքեան Ցատուրեան — Ս. Հ. Ֆէլէքեան

---

### 56. Պատասխան ողջունի Սիրոյ Եղբայրական

Բարեա՛ւ տեսանք ձեզ՝ Եղբարք իմ սիրուն.
Որ զմեզ ձեր սուրբ սիրով կողջունէք
Որուն փոխարէն կուտամք մեր ողջոյն
Որ զանի Հայոց փրկանք կանուանէք.
Ձեռք առէ՛ք Պէզճեան սաներ.
ձեռք առէ՛ք.
Մեր ձեռքն Հայրենեաց համար է պատրաստ.
Մեր կեանքն ալ անոր համար գըրեր ենք
Որ նա փրկուի, և ըլլայ ազատ։

Եդեմի վայրին զարդերն էք դուք ալ,
Որ ձեր և մեր Հարք ննջեցին կարօտ.
Եւ մեր Հայրենեաց փառքերն էք դուք ալ,
Որ կ'արշալուսէ ձեր քաղցր առաւօտ,
Ձեռք առէք Պէզճեան սաներ,
ձեռք առէք.
Մեր ձեռքը Հայրենեաց համար է պատրաստ,
Մեր կեանքն ալ անոր համար գըրեր ենք
Որ նա փրկուի և ըլլայ ազատ։

Իսկ թէ օր մը մենք՝ Եղբա՛րք թեւ 'ի թև,
Դէպ 'ի Հայաստան խայտալով երթանք,
Հոն դարձեալ կուտամք մէկ մէկու բարև
Այն բարև կըլլայ մեր ուխտն ու փըրկանք.
Ձեռք առէք Պէզճեան սաներ,
ձեռք առէք,
Մեր ձեռքն Հայրենեաց համար է պատրաստ,
Մեր կեանքն՝ ու ձեր կեանքը առայն գրենք,
Որ նա փրկուի, և ըլլայ ազատ։

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Տիրունի Ղուկասեան — Ս. Հ. Ֆէլէքեան

---

### 57. ՀԱՅՐ ՄԵՐ ՈՐ ՅԵՐԿԻՆՍ ԵՍ

Ո՛վ Հայր մեր, Հա՛յր որ ես յերկինս՝
Սուրբ եղիցի անուն քոյին.
Եկեսցէ մեզ, Աստուա՛ծ հզօր:
Արքայութիւն քո երկնաւոր,
Եղիցին կամք քո խնկելի
Որպէս յերկինս՝ և ա՛ստ յերկրի։

Ըզհաց հոգւոյն մեր և մարմնոյ
Տուր և այսօր շնորհիւ քոյ,
Եւ թո՛ղ մեզ թո՛ղ ըզմեր պարտիս
Որպէս և մեք թողումք յաստիս
Ամենեցուն որ մեզ մեղան
Կամ ցնացին մեզ պարտապան։

Ո՛հ, մի՛ թողուր ի փորձութիւն,
Այլ հանապազ հա՛ս յօգնութիւն,
Եւ յամենայն չարին մըցմանց
Փըրկեա՛ ըզմեզ Տէ՛ր գըթութեանց,
Զի քո է միշտ արքայութիւն,
Քո փառք պատիւ և զօրութիւն։
Ամէն։

Եղանակ — Խօսք
Գերմանական — Խորէն Եպս. Ն. Պ.

---

## 58. ՀԱՅ ՄԵՌՆԻՆՔ

Ով եղբարք, ո՛չ՝ օտարներէն չի՛կայ յոյս
Մի՛ աչվըներդ դարձընէք յայ՝ յայն կոյս.
Խոտարն ըզձեզ թէ եւ սիրէ հիւրաբար՝
Օտարն՝ ա՛հ, միշտ է օտա՛ր:
Օտարը ձեր վ՛շտ կը դիտէ անդորով
Ի՛նչ փոյթ որ դուք թափէ՛ք արցունք ա-
րիւնով,
Թէ՛ որ Հայ չէ՝ Հայուն ցաւեր նա չըզգար.
Ի՞նչ կը խարուիք անդադար:
Մի՛ դուք ձեր յոյս մի՛ աւանդէ՛ք օտարին,
Մի՛ խոր վ'րքերդ ցուցունէ՛ք անգութին,
Արգահատա՞նըս կը յուսայք, օգնութի՞ւն,
Ձեր կը ծաղրեն մերկութիւն:
Գիտեմ ձերբերը ծա՛նր է ծա՛նր. ո՛վ Հայեր
Բայց կը կարծե՞ք զայն վերցընեն օտարներ,
Թողէ՛ք զօտար, տուէ՛ք եղբայր եղբօր թեւ.
Եւ զօրացէ՛ք անդեղեւ:
Բաղդը դարձեր է ձեզի դէմ թըշնամի,
Մի՛ վըհատի՛ք, ցուցուցէ՛ք սիրտ Հայեցի.
Չէ՛ կարող բաղդ յաղթել ազգին այն քաջի,
Որ բաղդին դէմ կը կռուի:
Ձեր հայրերուն ո՛չ շըղթայք ո՛չ սուսեր,
Զըկա ացին ընկճել ո՛չ միտք ո՛չ սրտեր.
Ինչո՞ւ ձեր սիրտն այսօր դողայ ավկար, հէգ,
Ի՞նչ, այն քաջաց որդի՛ք չէ՞ք:
Չէ՞ք դուք որդի՛ք այն, դիւցազանց աննըման,
Ու Հայրենեաց ճենճերեցան ի սեղան...
Չէ՞ք դուք որդի՛ք այն մեծ Հայոց՝ որոց կեանք.
Էն մարդկութեա՛ն խիկ պարծանք:
Դուք որ ունի՛ք ձեզ պատմութի՛ւն մ'ազգային,
Որոյ վերայ մեծ ազգեր կը նախանձին.
Ի՞նչու այսօր մոռցած զանցեալ ձեր փառաց
Երանի՛ տայք օտարաց:
Օ՛ն, ով կըզգայ սիրտը եռանդն եւ ոգի,
Թող՛ու զօտար եւ իւր նախնեաց հետեւի.
Մեր կեանքը հո՛ն է ուր կրօնից մեր սեղան,
Այն է Հայոց վառարան:
Եղբա՛րք Հայուն կեանքը երբէք չի մեռնիր,
Երկինք լեցուն են այն բոցով կենսաձիր.
Որչափ տիրէ մըշտայաղթ Խաչ Քրիստոսի,
Հայն ալ անոր հետ կապրի:
Ի՞նչ կը վախնայք... գլուխնուդ վերայ չէ՞ք
տեսներ,
Քառամթեւին գիտարաւոր վէհ ըստուեր,
Այն սուրբ փայտին բուն շաղեցին ձեր հօրքը
Խռենց վսե՛մ արեամբք:

Դուք ալ Խաչին խարըսխեցէք ձեր յոյսը,
Եւ հաւատացէ՛ք պիտի ծագի՛ ձեր լոյսը,
Նա ազգութեանդ եղաւ պարիսպ ամրափակ
Նա ձեր ըլլայ գի՛նք դրօշակ...
Ո՛չ, հնար չէ՛ որ կորսուի այն ազգը,
Որ հաւատարիմ մընաց Խաչին միշտ ոտքը.
Նորա կեանքը պիտի տեւէ ա՛յնչափ դար,
Որչափ կրօնից կեանք յաշխարհ:
Այն վեհ կրօնից եւ Ազգութեան անունով,
Հայ եղբա՛րք ձեռք ձեռքի տուէք սիրով.
Անխըռովիւ, քէն՝ մերժըլին հալածուած,
Անիծեցէ՛ք զազդատեաց...
Ամեն մէկ սիրտ՝ բզգայ նոյն սէրն Հայրենեաց,
Ամենուդ միտք թըռչի յօգուտ համազգեաց.
Ու ձեր յետին եղբօր արցունք ու ցաւ միշտ,
Ըզգացէ՛ք ձեր իբրեւ վիշտ:
Օտարին հաց մեզի սընունդ չէ՛ բնաւ,
Օտարին ջուր՝ ոչ, չի՛ մարեր մեր ծարաւ,
Մեզի կենաց տըւող եւ մեր պահապան,
Է Աւազանն Հայկական:
Այն աւազանն՝ այն Հայութեան կընքատուն,
Ո՜հ, չուրանա՛մք եղբա՛յք յուսով զաղփաղ-
փուն...
Եւ թէ մեր ճանէ պիտի մարի մերջանկէս,
Թո՛ղ մարի յայն սուրբ կըրկէս,
Թո՛ղ ամենք ալ ըղդունի նոյն գերեզման,
Վասըն զի նո՛յն էր ամենուս ալ օրրան,
Հայ ծընանք մեք, Հա՛յ ապրինք. Հայ եւ
մեռնինք,
Օ՛ն, Հայ մըտնենք եւ յերկի՛նք:

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Ն. Ծ. Թաշճեան — [illegible]

## 59 ՆՈՐ ՏԱՐԻ Մ'ԱԼ

Ողջո՛յն եղբարք Նոր տարի մ'ալ,
Ողջո՛յն կենաց տանք այսօրուան
Ո՛ր օրինաց լուսոյ ծաւալ
Սեւ ամպերու ցրուեց կայան
Եւ Հայութիւնն ոգի առաւ
Փառաց ուղին դիմել անձկաւ
Ողջո՛յն խնդալից
Քեզ որ բաղձալի,
Յիշատակդ յաւէտ
Մընայ սիրելի,



Հոյ զաւակունք ի մի խմբին
Բարերատիկ տօնել այսօր
Տեսէ՛ք ինչպէս զուարթ ժպտին
Դէմքերն ի փայլ ցնծութեան նոր
Հնչեն ուրախ երգոյ ձայներ
Տան արձագանք Հայոց դաշտեր
Թէ մեր սրտերուն
Ցրուի արդ թախիծ
Զի սուրբ միութեամբ
Յօժարին 'ի կից
Եղբարք թէ արդ օրէնք ունինք
Ի շնորհս ընտիր մեր Արքային
Եւ ջանադիր անխոնջ Հայրիկ
Յօգուտ Ազգի եւ Հայրենին
Լնունք ապա մենք ալ մեր պարտք
Թէ ազգութեան կը ճանչենք յարդ
Գործենք անձանձիր
Կրենք ժիր ոգի
Որ սուրբ պսակոց
Ըլլանք արժանի
Որդիք ենք մենք մէկ մօր սիրուն
Ինչո՞ւ չըլլանք մէկ սիրտ մէկ անձ
Մեր խանդակաթ եղբայր անուն
Ինչպէս կրնանք մըտել ի բաց
Ո՛չ եղբարք, ո՛չ քան զամենայն
Քաղցր ըլլայ մեզ Միութեան ձայն
Օն ուխտենք ապա
Սէր եւ միութիւն
Պահել երջանիկ
Միշտ մեր ազգութիւն։

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Ն. Թաշճեան — Կ. Պաղճեան

60. [illegible]

Շէհինշահի հադայիգ պինիւ սուլթա-
նի տադայիգտան.
Փէի եանի հազրէթի Ապտիւլ Ազիզ խա-
նի ճիհան պինեան,
Հէմիշէ լութֆ ու ատլի միլլէթ ու միլ-
քէ օլա չաեան,
Խիւտա գըլմըշ օ սուլթանը զէմանէ
մէրհամէթ էհսան,
Նաքարաթ
Ցիւզունի չէվքէթ ու շան իլէ օլմադ-
դա տուա կիւեան
Ըգապեան մէքթէպի չակիրտլէր հէր
հէր ան ու հէր էզման,

Բիւշատ օլտու մէքեաթիպ, պուլտու
քէսրէթ իլմ իլէ տանիշ,
Զիեայի սէրպէսիյէթ պուլտու կիւթ-
տիքճէ եինէ թապիշ,
Պուլուպ հէր սընֆը միլլէթ սաեէսին-
տէ ճիւմլէ սայիշ,
Տուայի էօմրիւ էճլալին իտէր հէր պէն-
տէսի խահիշ։

Եպէտ գըլըըն շէհինշահի զէմանի Հազգ
խիլաֆէթտէ,
Ազիզտն հիւրմէթի իչին օլա հէր տէմ
սայէ ու րահաթտէ,
Խիւտանէտ էսմէսին պատի խէզան պու
սորբ տէվլէթտէ,
Վիճուտի բաքի թա րուզի գըեամէթ
օլա սըհհէթտէ։

ԱՀԷՆԳ — ՆԻՒՖԹԷ
Ն. Թաշճեան — Խայրի

## 61. ՇԻՒՔՐԱՆԻՅՅԷԹ

Ճան օլան ճիսմի ճիհանէ, եանի նու-
րը տիտէյի պիտարըմըզ,
Հազրէթի Ապտիւլ Ազիզ խան, շահըն-
մըզ սուլթանըմըզ հիւնքեարըմըզ,
Այէթի լութֆ Ալլահի գիլերի էվ-
րէնք շահի մագսէտի էֆքեարըմըզ։
Հազրէթի Ապտիւլ Ազիզ խան, շահըն-
մըզ սուլթանըմըզ հիւնքեարըմըզ,
Նուրը իրֆանըլա միւնէվվէր օլտու ան-
տէն գարըմըզ մըգտարըմըզ,
Հազրէթի Ապտիւլ Ազիզ խան, շահըն-
մըզ սուլթանըմըզ հիւնքեարըմըզ։

Գէնտէքէրմէր օլտուղու իչին աչտը մէքթէպլէր նիչէ է՛սարտէ,
Գէօյլէ պիր Սուլթանը քիմսէ կէօրմէմիշ հօգգա պիւթիւն տաարտէ,
Կիւլ պիւէ չատապ օլուպ տէվրինտէ խօշպուլիքըյէ հէր կիւլպարտէ․
Ալէմի իծտիմ թէճէսսիւս կէօրմէտիմ պիր քիմսէյի խասմի պիւլէ էֆքեարտէ
Ֆարզը ային օլմուշ պիզէ հէր սուպհ ու չամ իծմէք սէնա էչարտէ․
Հազրէթի Ապտիւլ Ազիզ խան, չահըմըզ սուլթանըմըզ հիւնքեարըմըզ․

---

Էյլէտի հէր միլլէթի մազսուտինէ նայիլ օլ խագանը աղիզ,
Ահրարը մարիֆէթլէ իծտի խալգըն ճէհլինի թէմիզ
Բէզմէյի ճէննէթ կիպի տիւնեա չէմիմի աղ ու իրֆանընտան օլտու բէթըր պիզ,
Ալէմի նօգսանը թէքմիլ իծտիկի կիպի կիւլ օլտու հէփ Ֆիլիզ
Ճիւմի խասմի զուլմէթի զաֆլէթ իլէ օլտուն պէլաքէշ պի ս՛թիզ․
Հազրէթի Ապտիւլ Ազիզ խան, չահըմըզ սուլթանըմըզ խիւնքեարըմըզ։

Աճէնք — Ն․ Թաշճեան

Կիւֆթէ — ՐԻՖԱԹ

---

## 62․ Գազէլ

Պէրայի թէպրիքեարի տավլէթլի ալէ վլէթլու խամէթլու Վալիտէ Սուլթանը ալիյեէթ-իւշան :

Էյ մատէնի իզզ ու ազամէթ զաթի մուխատտէր,
Մէվլա իտէ էօմրիւն իլէ իգպալինի պէրթէր,
Ցավաթըն ըթա հաչլէ գատար խոշ լիմ էգպէր․
Նոխտալի
Էյ վալիտէյի շահի քէրէմքեար ու մուզաֆֆէր,
Վ՛էյ մաճիտէյի հազրէթի սուլթանի ղազանֆէր․

---

Շան ու շէրէֆ ու շէվքէթին էֆզուն իտէ Մէվլա,
Լութֆ ու հիմէմինլէ պու ճիհան օլմուշ իհեա,
Տէրկեահընա սիւրիւն եիւզինիւ հէր փէս ու պալեա

"

Սէն վասըթայի թալաթի սուլթանի զէմանըն,
Գու միլլէթ ու միլքէ նէ՛ կիւզէլ չէօհրէթ ու չանըն,
Շահինչէհի տէվրան իլէ տիլլէր սէնի անըն․

"

Սէն ըէմուզը էվրէնկի խիլաֆէթսին էֆէնտիմ,
Սէն համիյէյի տէվլէթ ու միլլէթսին էֆէնտիմ․
Փատաշի հարէմնէրայի նիւպիւվվէթսին էֆէնտիմ․

"

Հէրտէմ իտէրիզ սիւպհէյի խայրիյեէնի պիզ եատ,
Թա քիւլսիւն տէրսէ օլալը վասըլ ու իգատ,
Ցավաթըն օգունսուգծա կէօնիւլլէր օլուր ապատ․

Աճէնք — Ն․ Թաշճեան

Կիւֆթէ — Խայրի

---

## 63․ ԽՐԱԽՈՅՍ

Նուսանք Հայոց ով Ազգայեանք իմ քոյրեր
Եկէք միմեանց խառնենք սրտի մեր երգեր
Ցոյց տանք Հայոց մեր սիրելի հայրենիք
Ցոյց տանք Հայոց զոր կորուսին դասալիք։
Եկնք երբեմն մենք ամպոց ծածկած տակ
Անլոյց լեզի անդ կը հոսէր մեր փոակ
Գիշերն անցաւ ահա արև կենսաբեր
Արիք առ այն ով Ազգայեանք իմ քոյրեր ։
Պայծառ բացաւ մեր դէմ այգը պայծառ



Եկէք քոյրեր 'ի ձեր նուագ սիրավառ
Անմահ կենաց լաւ մի ունիք ձեր վրայ
Նա սիրտն և ձեր, 'ի հայրենիս թող շողայ։

Նշանակ — Խնկուհի Սարգսեան

Խօսք — Մատթէոս Ա․ Կիւլպէյեան

Աշակերտ փանոսեան վարժարանի

---

## 64․ ԱՐԵՒ ՀԱՅՈՒՆ

Բացաւ օրուան ամպը մթին
Հրճուի երկիր ղուարթագին
Լուսոյ առջև փոյլին արձակ
Մարդ կամ թռչուն միշտ համարձակ․
Աստղերու տակ այս ազատ
Ո՞վ կուլայ խեղճ Հայէն զատ ։
Ազատութեան դրօշ կենաց
Կը ծածանի վերայ դաշտաց
Սրտից երգեր խնդից ժամեր
Ծաղրեն անցեալ դաժան դարեր․
Աստղերու տակ այս ազատ ։
Զմնաց խեղճ Հայէն զատ
Բաղեն ծաղիկ մինչ է գարուն
Բամեն բաժակ երբ գայ աշուն
Ջայն ու քնար ունին ահա՛
Կեանք ու արև իրենց վկայ
և՛Աստղերու տակ այս ազատ
Զի՞ք անարև Հայէն զատ ։

ԵՂԱՆԱԿ — Մէօրիւքեան Ցատուրեան

ԽՕՍՔ — Սերովբէ Ս․ Թիւրապեան

Աշակերտ փանոսեան վարժարանի

---

## 65․ ԹՌՉՆԻԿ

Կեցիր վայրիկ մի թռչուն
Մի դու այդպէս անցնիր չէնքեր ու աւեր․
Մի ճեպեր
Կեցիր որ, քեզ տամ աւետիս մի սիրուն կենսաբեր
Կեցիր թռչնիկ իմ պանդուխտ
Տե՛ս․ զի ահա՛ Հայոց վայրեր ծաղկեցին Հայրենին
Վարդն ու ծաղիկ փսեմ կենաց սիրոյ ու խոտ
Հայ սրտին։
Առ իմ քնարս այս լուր,
Հետ տար թռչնիկ, և երբ հասնիս յԱրարատ
Դու ազատ
Հան հնչեցուր, թող արտասուքս հոն թափին
Հարազատ ։

Աշակերտ փանոսեան վարժարանի

Նշանակ — Դոմնի Գաբրիէլեան

Խօսք — Սիրական Սարգսեան

---

## 66․ ԽԱՉՆ ՀԱՅՈՒՆ

Ցաւալ ո՛վ Հայեր
Ի սիրտ անվեհեր,
Ցաւալ դուք 'ի խաչ
Ի սիրոյն առաջ․
Այս խաչն է Հայուն
Սահմանադրութիւն ։
Երբ նա ծածանի արևուն 'ի շող աւերց մէջ շողշող,
Ցամքին առ Նոյեան թախծեալ աչերու բիբեր ցօղ 'ի ցօղ,
Նա ինքն է Հայուն անցելոյն ոգին, ու ներկային կեանք․
Օ՜ն Հայեր ի խաչ մեր ուստի ծագի մեզ փառք ու փրկանք ։
Եղբարք ալ յառաջ
Ընթացէք քաջ քաջ,
Եւ դարուց վրէժ,
Ցորդ քրտանց 'ի վէժ
Ճակտէն ձեր 'ի վայր
Սրբեցէք խաչառ ։
Ցաւալ ո՛վ Հայեր,
Ի սիրտ անվեհեր,
Ցաւալ դուք 'ի խաչ

Ի սիրոյն աւաչ ,
Այս խաչն է Հայուն
Սահմանադրութիւն ։

Եղանակ　　Խօսք
Իսկուհի Յակոբեան　Սիրական Սարգիսեան
Աշակերտ
Փանոսեան վարժարանի

———

## 67. Ի ՍԷՐ
### ԿՐԿԻՆ ԲԱԺԱՆԵԱԼ

Սէրն 'ի մարդիկ կրկին վճռի
Այն է զգաստ և սէր յոռի
Սա լոկ տիրէ 'ի զգայարանս
Եւ տագնապէ կարի ցկեանս ։
Սորա ծնունդն 'ի չարէն է
Եւ ոչ 'ի սիրտ մեր բնակէ
Ոչ զհոգի մեր ամբառնայ
Այլ իբր ցեց մաշէ զնա ։
Սա ախտամոլ կոչի սէր
Ապշեցընէ յոյժ միտքեր
Եւ պատճառէ հէք վշտեր ,
Միւսն զգաստ սէր յերկնից մեզ
Պարգև շնորհեալ հաստատապէս
Զայն թէ ճանչեմք , երջանիկ եմք
Զի բիւր բարիք միշտ վայելեմք ։
Սա ծնանի կրքեր խոհեմ
Եւ զգացմունքն իւր են վսեմ.
Հանգչի յոգի , կայ անվրդով
Զտայ երբէք անձին խռով ։
Նորա բերկրանքն անբիծ են
Վշտեր զանի չը նեղեն
Կեանքն անխռով միշտ պահեն.

ԽՕՍՔ ԵՒ ԵՂԱՆԱԿ
Գոհնի Գաբրիէլեան
1872 մայիս 1　Աշակերտուհի
Ագապեան վարժարանի

## 68. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Օ՛ն յառաջ դիմենք ընկերք
Յառաջ ըզմեզ կոչէ փառք
Ազատութեան արձագանք
Վառէ ըզ վեհ ձեր ոգի ,
Երթանք յառաջ՚ օն փութով
Խըզենք լըծոյ շղթաներ
Ազատութեան զինուորներ
Զընջեմք դըրօշմ բռնութեան
Ահա փառաց ասպարէզ ,
Անդ կուսանք չքնաղագեղ
Երգ 'ի բերան սիրտ բերկրանք
Խայտան կայտառ 'ի խինդ կայթ ։
Ազատութիւն անդ տօնեն
Մահացուին կեանք երկնածի
Որով աշխարհ գործէ ժիր
Վայելք բարեաց իւր բաժին

Խօսք և Եղանակ
Գոհնէ Գաբրիէլեան
1872 մայիս 1　Աշակերտուհի
Ագապեան վարժարան

## 69. ԼՈՒՌ ՔՆԱՐ

Ինչո՞ւ կաս լռին մուսայդ Եդեմին ,
Այդ մահահամբոյր աւերակաց մէջ ,
Ուր անգութ դարեր վէտ վէտ ծածկեցին ,

Վեհապանծ Հայոց սրտի հուրն անշէջ
Ո՞ւր է քոյ արև քոյ լուսին ՚ւ աստղեր
Զոր Մասսի գլխէն Աստուած էր կախած
Ո՞ւր են քոյ փառքեր քոյ քաջք անվեհեր ,

Զոր Հայոց հողերն քեզ էին տուած ։
Ո՞վ ձգեց աւա՛ղ այդ քող արևնոտ ,
Քոյ աւերակաց վրայ օգաւոր .
Ո՞ր ամպ ծածկեցին կենացդ առաւօտ,
Յոր հեծեծս ողբաս և լաս դարաւոր ։
Քամի մ'էր փչեց անողոք հիւսիս ,
Արեւելք լացաւ հեծեց արեւմուտք .
Փայլակ մ'էր շանթեց , բոց մ'առաւ Մասիս ,

Եւ հրդեհ առին հայրենի ծաղկունք ։
Ծառեր չորացան խամրեցան բոյսեր ,
Գարունք և այգիք սև զգեցան սև .



Ցամքեցան աղբիւրք գետակք լճեր ,
Վա՜հ մուսայդ լռեց քնարիդ արև ։

Եղանակ　　Խօսք
Տիրուհի Ղուկասեան　Սիրական Սարգիսեան
Աշակերտ
Փանոսեան վարժարանի

———

## 70. ՈՂՋՈՅՆ ՀԱՅՈՒՆ

Ողջոյն տուէ՛ք իմ հայրենեաց
Կիսակործան տաճարներուն ,
Ողջոյն տուէ՛ք աւերակաց
Արարատեան գաւառներուն ։
Ողջոյն տուէ՛ք պանդուխտ Հայուն՝
Թշվառ Հայուն՝ չուառ Հայուն ,
Ո՛հ ձեռք տուէք, ո՛հ սիրտ տուէք,
Հոգի տուէք անկեալ Հայուն ։
—Երկինք ողջոյն տուաւ Հայուն. —
—Երկինք հոգի տուաւ Հայուն՝ —
—Սահմանադրութիւն՝
—Սահմանադրութիւն ։
Ողջոյն տուէ՛ք Աւարայրի
Արիւնաներկ սուրբ վայրերուն,
Ողջոյն տուէ՛ք տխուր լուսնի,
Որ լացն է սև շիրիմներուն.
Ողջոյն տուէք պանդուխտ Հայուն՝
—Երկինք ողջոյն տուաւ Հայուն ։
Ողջոյն տուէք 'ի հող իջած
Արքայական պալատներուն,
Ողջոյն տուէք գետնատարած
Սրբոց անբիծ մասունքներուն.
Ողջոյն տուէք և ն.
—Երկինք ողջոյն տուաւ և ն.
Ողջոյն տուէք ոլոր գլոր
Մոլոր վազող գետակներուն ,
Ողջոյն տուէք պղտոր բոլոր
Աղի լեղի աղբիւրներուն.
Ողջոյն տուէք և ն.
—Երկինք ողջոյն և ն.
Ողջոյն տուէք իմ դրախտի
Տերևաթափ պարտէզներուն ։
Ցոր ծածկի սէր 'ւարև պահի
Փառք իմ Հայոց Աստուածներուն.
Ողջոյն տուէք և այլն
—Երկինք ողջոյն և այլն ։
Ողջոյն ծաղկանց տուք խումբ ի խումբ
Որ կան թոշնած մէջ հովտերուն
Ուր Հայ սոխակ թումբէ ի՛ թումբ
Կեանք կը խնդրէ դեռ վարդերուն
Ողջոյն տուէք և այլն
—Երկինք ողջոյն և այլն ։
Ողջոյն տուէք Հայ մուսային ,
Որ լայ զփառս իւր հաւերուն .
Ողջոյն տուէք իմ քնարին ,
Որ Հայկայ տանս է ողբերգուն .
Ողջոյն տուէք և ն.
—Երկինք ողջոյն տուաւ և ն.

ԵՂԱՆԱԿ　　ԽՕՍՔ
Ն. Թաշճեան　Ս. Հ. Մ. Ֆէշէկեան
Հայկաբան
Փանոսեան վարժարանի

## 71. ՄԱՐՇ
### ԿՈՒՍԱՆՔ ՀԱՅՈՑ

Ելէք 'ի հանդէս քորք իմ նազելիք ,
Ալ հերիք 'ի քուն աչկունքդ փակեցիք ,
Օ՛ն ելէք փութով , ահա գիտութեան ,
Զանգակն այն ուժգին զուաց արթնութեան
Անցաւ մահաստուեր գիշերն ահարկու ։
Մեզ արև ծագեց ուսման լուսատու ,
Թող ծագէ և ձեր , ձեր սրտից խորեր ,
Վանէ՛ նախանձ խեռ հոն սէրմանէ սէր։
Մատունքդ 'ի կեթառ աչկունքդ 'ի յեթեր
Դուք ազատութեան կարդացէք հրաւէր ,
Ո՛ կուսանք Հայոց դուք էք քաջալեր .
Մեր այս զառն կենաց անբաժան ընկեր ։
Օ՛ն վրկեմք զիրար ընթանամք 'ի լոյս ,
Մեզ են զօրավիգ ժամանակն և յոյս ,
'Ի լոյս գիտութեան դիմեմք ո՛ կուսանք
Ընթանամք յառաջ այս են մեր փրկանք ։
Բայց թէ յապաղիմք ելլել 'ի հանդէս ,
Վկայ են երկինք ոչ ըզ գթայ մեզ ,
Զի ահա անդէն կենացն այն զանգակ ,
Գուժէ մեզ յաւէտ զոյժս անօրինակ ։

ԵՂԱՆԱԿ　　ԽՕՍՔ
Ն. Ս. Թաշճեան　Գ. Հ. [illegible]

## 72. ՅԻՇԱՏԱԿ

1. Մերթ ի լուռ գիշերի
Դեռ չը գրկաց զիս քուն խոր
Բերէ լոյսն հին օրի
Ծեր Յիշատակն իմ բոլոր
Ժպիտքն, արտասուք,
Տիոց մանուկ,
Սիրոյ խօսքերն՝ անդ խօսուած,
Աչերն փայլող
Այժմ գոց ի հող
Ջուարթ սրտերն արդ կոտրած
Ա՜հ ի լուռ գիշերի
Դեռ չը գրկած զիս քուն խոր,
Բերէ լոյսն հին օրի
Տխուր Յիշատակն իմ բոլոր,
2. Երբ կը յիշեմ ամեն
Բարեկամներ սիրայօդ,
Որք չորս դիս ինկեր են,
Ջերթ տերև առ ձմրան օդ,
Կըզգամ երբ այն,
Որ կայ միայն
Ի սրահ խնճոյից լքեալ.
Ուր ջահք չեն վառ,
Ջարդքն ի խաւար,
Եւ այլք ամեն են գնացեալ
Ա՜հ ի լուռ գիշերի,
Դեռ չը գրկաց զիս քուն խոր,
Բերէ լոյսն հին օրի,
Տխուր յիշատակն իմ բոլոր:

Եղանակ Անգղիական — Կ. Մ.

---

## 73. ԹԷՇՎԻԳԱԹ

1. Տուրմաեալըմ արթըգ Հայլար,
Պաամըշ տիւշմէն օրտումուզու,
Գուշանալըմ պիզ սիլահլար,
Հըֆզ իտէլիմ եուրտումուզու,
Ճէհալէթ տիր մէզքիւր տիւշմէն
Խիեանէթ տիր սալթ նիյէթի,
Հէմ սէֆիլլիք նիհայէթի,
Թարտ իտէլիմ իչիմիզտէն:
Հայլար ուեանալըմ,
Հազզա սըղընալըմ,
Իլմ ու հիւնէր գալէասընտան
Տիւշմէնի վուրալըմ:
2. Տիթրէսին օլ զուլումքեար ճէհլ,
Եէթիշտի կիւն կէլտի ֆուրսաթ,
Վիրմէյէլիմ պիր լահզա մէհլ,
Գահր իտէլիմ չիւն վար րուխսաթ,
Խային ճէհլի թա աննընտան,
Վուրալըմ թիրի իլմէ,
Շէճաաթլա հէմ չիտտէթլէ,
Ալարագ տէրս Ալմանեատան:
Հայլար և այլն:
3. Պէօյլէ պիր սօրը միւնէվվէրտէ,
Իտէլիմ հէր իլմի թահսիլ,
Օլմաեալըմ արթըգ խէճիլ,
Շու սայէյի Շահանէտէ,
Աչալըմ հէր եէրտէ մէքթէպ,
Եազըլալըմ հէման ասկէր,
Տիմէյէլիմ զապիթ նէֆէր,
Էօյրէնէլիմ ախլէագ էտէպ:
Հայլար և այլն:
4. Հայը՛ֆ պիզի իթմիշ խարապ,
Պըրագմամըշ ասլա մէտար,
Օլմուշ գանըմըզտան սիրապ,
Մասս իտէրէք լէյլ ու նիհար,
Ինսաֆը եօգ տօյմազ պիլմէզ,
Էր ու նիսա պայ ու կէտա,
Զուլմունա իյլէմիշ ֆէտա,
Հի՞չ պիր ճինաէ հիւրմէթ իթմէզ:
Հայլար և այլն:
5. Տէյի՞լմիյիզ մէկէր պիզ մէրտ,
Գա՞լմամըշ մը հիչ գանըմըզ:
Ճայի՞զ մի տիր տէսին նամէրտ,
Հա՛յլար, պիզէ, վաթանըմըզ.
Հէմ աերպ տըր հէմտէ կիւնահ,
Կէչիրիրսէք պօշա զէման,
Մույին օլմազ ասլա ճիհան,
Իթսէք տախի հէզարան ա՜հ:
Հայլար և այլն:

Եղանակ Եւրոպական — Կ. Ց. Փ.



## 74. ՔԱՋԱԼԵՐ

Դիմենք քոյրեր, դէմ թշնամեաց
Կանգնենք դրօշ մեք գիտութեանց
Ով որ Հայուն բարին բաղձայ
Վեհ յիշատակ նա կունենայ:
Ազատ քոյրեր առնունք արագ
Այն քաջերուն հասնիլ փութանք
Որոց միտն է քաջն Վարդան
Օն խիզախենք անոր նման:
Օն Հայուհիք ջանանք փութով
Հասնիլ փառաց մեր անվրդով
Աղէ, մէկ սիրտ պարտենք զանոնք
Որ զՀայն ատեն թշնամանօք:
Ով թշնամիք հէք Հայութեան
Տգիտութիւն հեռ և նախանձ
Հայք ձեզ յաղթեն, սուրբ միութեան
Դրօշ կանգնենք ի սար Մասեաց:

Խօսք և եղանակ
Իսկուհի Յակոբեան

---

## 75. ԵՐԳ

### Ի ՀԱՆԴԷՍ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

12երրորդ տարեդարձի

Գեղածիծաղ առաւուն բերէ նոր ողջոյն,
Նոր աւետիս տայ մեզ այսօր խնդագոյն.
Պարզեալ դրօշակ կանգնէ 'ի մեզ ծաղ-
կազեղ,
Մեզ հրաւէր կարդայ թռչնոց հեշտ
գեղգեղ:
Օ՛ն անդր եղբարք ժամ է արդ մեր
խայտալոյ,
Ժամ է որ ուխտ կնքեմք ու դաշըն սիրոյ.
Թող սա դաշտեր թնդան հրճուին
բերկրաձայն:
Երկինք պսակ կապէ Հայոց ազգութեան,
Ժամ է փառաբանք օ՛ն խաղամք յառաջ
Դէպ 'ի գիտութիւն երթամք աննա-
հանջ,
Սահմանադրութեան անդ պարզեմք
դրօշակ,
Թող հոն մեր սրտեր կրկնեն արձագանք
Թէ նա է փրկանք մեր
Հայութեան անվեհեր
Թէ շնորհ մ'է անգին
Վեհափառ Սուլթանին:

Եղանակ — Էֆթիկ Յովհաննէսեան
Խօսք — Գրիգոր Սլէյման Պիւքիւճեան

---

## 76. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ազատութիւն ուր տեղ որ կայ
Երջանկութիւն հոն կը պանծայ
Իսկ բռնութիւն ուր որ տիրէ
Բոլոր չարիք հոն պակաս չէ:
Ազատութեան անուն քոյրեր
Քաղցր է եղեր այնչափ դարեր
Սիրենք ուրեմն ազատութիւն
Վարել 'ի լոյս ուսմանց ներհուն:
Ազատ ապրինք ազատ վարուինք
Բայց մեր չափէն չի խոտորինք
Տգիտութեան մեք ախոյեան
Բոլոր ջանքով ըլլանք միայն:
Ազատութեան չէ՞ այս արդիւնք
Որ մենք ուսմանց ճաշակն կառնունք
Քոյրեր, նորա յարգը ճանչենք
Մեր ապագան միշտ միտք բերենք:
Ցայն ասպարէզ թէ մեր ոտքեր
Դեռ նոր կառնուն դողդոջ քայլեր
Հոգ չէ, զուարթ յառաջ դիմենք
Բնաւ բան մը չի խնայենք:
Սիրենք մենք միշտ ազատութիւն
Վանենք ցրուենք վատ բռնութիւն
Նորա համար միշտ աշխատինք
Ազատ ուղեղ զմեզ երկինք:
Ազատ մարդիկ ուր որ ըլլան
Ամեն բարիք հոն կը տեղան
Նոյա զաւկունք ազատօրէն
Տգիտութեան խաւար ցրուեն:

Եղանակ — Ղամբէռաճէ Յարութիւն
Խօսք — Դուճէ Գաբրիէլեան

## 77. ԼՈՅՍ

Ուսմունք արդեօք մեզ կեանք կուտան
Ոգեպահիկ հացին նման
Երկու ձեռքով մեք զայն գրկենք
Մեր թշնամեաց անով յաղթենք։
Ուր որ ուսմանց լոյս կը տիրէ
Անդ ամէն ոք միշտ ազատ է
Նոյա յոյսեր շուտ պսակուին
Եւ փառքն իսկոյն վերականգնին։
Օն անդր դիմենք արագ քայլով
Եւ սնանիմք նորա կաթով
Զի նա և եթ մեզ մայր բարեաց
Նովաւ միայն յաղթեմք չարեաց։
Վահան ամուր նա կըլլայ մեզ
Տգիտութեան վատ ասպարէզ
Անշուշտ ըլլանք, անշուշտ Հայեր
Որ նա միայն մեզ փառք ու սէր։

Եղանակ — Խօսք
Գոմէէօօհէ Ցօրօօնէօն — Իօէօօհէ Ցօէօէ

---

## 78. ՆՈՐ ՏԱՐԻ
## 1870

1. Օն փութացէք հասեալ է ժամ,
Հարէք մարտի փողերն ուժգին,
Մեզ ահարկու կայ պատերազմ,
Արեամբ զինեալ է թշնամին։
Փշրենք ազատ, բանանք դուներ,
Զար նախանձուն մեր ոխերիմ,
Որ դարերով է մեզ փակեր,
Ի կուրութեան 'ի բանտ մթին։
Ի զէն օն փութացէք,
Գունդ ի գունդ Հայ դստերք,
Լուսոյն այս ՆՈՐ ՏԱՐԻՈՑՍ վանենք,
Բռնութիւն դաւ ու նենգ։
2. Մեր մարք մեր քորք խոցեցան շատ,
Շղթայակապ ի գերութեան,
Մինչդեռ մեր հարք, եղբարք ազատ
Անփոյթ էին կոյր զկուրայն։
Արդ և սոքա լուսոյն ուսման,
Տեսան վէրքերն իրենց ազգայ,
Ուստի լինին մեզ օգնական,
Առնել նախանձն արտահալած։
Ի զէն և այլն։
4. Ազատութեան կանգնենք դըրօշ,
Մեր իգական փափուկ սեռին,
Տեսնեն մեր քաջ ընկերք անյուշ,
Թ'այնու իրենց է մեծ բարին։
ՆՈՐ ՏԱՐԻՈՑ զէնք առէք զինուորք,
Մեր բան ըլնենք ՀԱՒԱՏՔ, ՅՈՅՍ, ՍԷՐ,
Իմաստութեան դստերք եմք քորք,
Այս մեզ փառք, պսակ, այս ձեզ հրաւէր։
Ի զէն և այլն * * *

Եղանակ Եւրոպական

---

## 79. ՏԵՆՉ ՊԱՆԴԽՏԻՆ

Երբ Հայկունհւոյն փափուկ քնարին նուրբ թելեր,
Կը թըրթըռայ ուժգին ձայնել Հայոց սէր.
Ո՜հ այն ատեն և դուք սանունք սանուհիք,
Օ՜ն, սիրտ ի խինդ միմեանց տուէք ձեռք փափկիկ,
Երգել թշուառն Հայրենիք։
Երբ սոխակին դեղ դայլայլիկ լեռ և ձոր,
Հնչեն ուրախ, բանան զուարթ լոյս և օր.
Ցայնժամ և դուք ո՛ մանկըտիք Հայկազուն,
Սլացէք ի դաշտ աւետել մեզ նոր գարուն,
Մեղմել վիշտերն հէք Հայուն։
Մինչդեռ զեփիւռն փչէ հանդարտ ու հեզիկ,
Գուրգուրալով ծաղկաց վրայ խաղաղիկ.
Օ՜ն, դուք որդիք մեր դիւցազանց վեհազուն,
Դիմենք ի սարն երգել նոցա վեհ անուն,
Որ մեզ տուին կեանք սիրուն։



Մինչ վըտակին կարկաչասահ ալիքներ,
Սըղոսկելով թանան դալարն ու մարգեր
Հապօն և դուք պարզել դըրօշ միութեան,
Հոն ուր նախնեաց աճիւնք հանգչին ի դամբան.
Հոն ուր մեր սուրբ հարք անկան։
Բայց Հայկունհւոյն երբ կը դադրի սուրբ քընար,
Շունչ զեփիւռին ու սոխակին երգ հազար,
Կամ վըտակին վըրփըրադէզ ալիքներ,
Ո՜հ այն ատեն ողբն է մեզի լով ընկեր
Լացն է մեզի լով ընկեր։

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Գամբէօհի Ցարութիւնեան Տ․փափազեան

---

## 80. ԽՂՁ ՊԱՆԴԽՏԻՆ

Թէ թեւ ունէի
Ո՜հ կը թռչէի
Ազատ մասեաց սարերն ի վեր ես ու․․․
Անկէ ձեզ Հայեր
սուրբ այլ հրաւէր
Թ'եկէք Հայեր ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին
Միրեմք ընկեր զընկեր սիրեմք կաթոգին։
Թէ գեռ յիմ արիւն
Զի խառնու եր թոյն
Գեռ երակացս մէջ աշխոյժ խաղային
Ո՜հ, քանի հպարտ
կանչէի ազատ
Թ'եկէք Հայեր ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին
Սիրեմք ընկեր զընկեր սիրեմք կաթոգին։
Թէ կեանք ունէի
Ո՜հ կը լարէի
Թել քնարի բաղդին Հայոց անկենդան
Որ նա ձեզ խօսէր,
Ձեզ պանդուխտ Հայեր
Թ'եկէք Հայեր ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին
Սիրեմք ընկեր զընկեր սիրեմք կաթոգին։
․․․ուլայի
․․․գի
․․․տեսն անմեկին։

Ցայնժամ և նոքա
Մի որդիք Հայկայ
Կըլլան 'ի մի անշուշտ մէկ սիրտ մա․․․
Սիրեմք ընկեր զընկեր սիրեմք կաթ․․․

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Ն. Ս. Թաչճեան — Ս. Հ. Գ. Չէլէպեան

---

## 81.

Առաւօտուն լոյսն ու հովիկ
Հեզիկ հեզիկ զերթ թիթեռնիկ
Համբոյր ողջոյն բերեն ծաղկին,
Եւ մեզ հրաւէր գարնանային։
Բուրիկ անուշ գոյներ քանի
Թերթեր փափկիկ թելեր ոսկի,
Կազմեն մեր փունջն ու մեր պսակ
Մեր մատներուն սիրուն վաստակ,
Երկինք պայծառ մեր ջանք արդար,
Հովիկ լուսին մեր շուրջ գան պար,
Մի՛ ամպիկ մի՛ գողնար մեր սէր
․․․ տուիր մեզ սէ․․․

ԵՂԱՆԱԿ — ԽՕՍՔ
Ն. Ս. Թաչճեան — Ն. Ս. Մէզպուրեան

---

## 82. ՄԱՐՇ
## ՈՂՋՈՅՆ

Ողջոյն քեզ դաշտ գեղածիծաղ
Ցարփւոյն շողից փայլեալ պայծառ
Ուր Հայկազունք հրճուին ուրախ
Տօնել զայս օր յերգ և 'ի պար։

*

Ցառաջ մատչինք սիրուն քոյրեր
Ազատութեան միմեանց ձայն տամք
Աստ թող սփռին լեռներ սարեր
Մեր ողջունի հեշտ արձագանք։

*

Տգիտութեան դէմ քաջաբէն
Մեք աներկիւղ ըլլանք զինուոր
Եւ Հայութեան սրբենք ճակտէն
Թշուառ անունն այն դարաւոր։

*

Ուխտենք եղբարք, քորք նազելիք

...ու յաւէտ մի կամք մի սիրտ
...նք զԱստուած, Ազգ, Հայրենիք
...ք ազատ ըլլալ մեք միշտ։

Եղանակ — Ս. Թաշճեան
Խօսք — Իսկուհի Յակոբեան

---

## 83. ՄԱՐՇ

### ՄՆԱՑԻՔ ԲԱՐԵԱՒ

Մնա՛ բարեաւ վայրդ գեղապար
Որ յուշ ածես մեզ զնդեմին
Զընիկ պատկեր փառաց պայծառ
Քեզ հրճուանաց ձայներ հնչեն
Մնա՛ բարեաւ։

Մնայք բարեաւ, խօսնակք զուարթ
Որ զՀայրենեաց երգէք նուագ
Մեզ հրաւէր կարդայ ազատ
Սէր գիտութեան և լուսոյ փառք.
Մնայք բարեաւ։

Մնայք բարեաւ, խաղամք 'ի փոյթ
Զինել ընդդէմ [illegible]
Խօսել գործել 'ի սիրտ անխոնջ
Լինել սատար Ազգին բարեաց
Մնայք բարեաւ։

Ազատութիւնն զմեզ 'ի բարձանց
Կոչէ ի մարտ դէմ բռնութեան
Ո՜ն զինեսցուք խրոխտապանծ
Վանել զունդեր չարին դաժան
Մնայք բարեաւ։

Գոռոզութիւն մեզ ծաղրելի
Կոխան ոտից պատիր բարիք
Այս սկզբունք մեր գովելի
Սիրել զԱստուած, Ազգ, Հայրենիք
Մնայք բարեաւ։

Եղանակ — Ն. Ս. Թաշճեան
Խօսք — Գամնի Գաբրիէլեան

---

## 84. ՏՈՒԱ

1. Փատիշահըմ պինլէր եաշա, միլ[լէթին]
վաթան օլասը ապատ,
Սայէյի ատլինտէ րահաթ պուլմագ-
տա սըր պայ ու կէտա,
Օլմագտա մէսրուր հէր միլլէթ, ս...
տուգճա մէքնաթիպ քիւշատ,
Փորճլու տուր իթմէկէ սիւպհան,
քէնտի չիւքրանընը էտա,
Սայէյի լութֆունտա հէրան
Օլտուգճա հուրրիյէթ աեան
Նէշվ ու նիւմա պուլսուն ուլում
Բիմնէլէր գալմասըն նատան։

* * *

2. Փատիշահըմ պինլէր եաշա, կէօրմէ-
սին շահզատէկեան թէրտ
Իգպալ չարխը իթտիքճէ տէվր,
պուլսուն նէշաթ սըհհէթլէրի
Պիլութֆի Եէզտան օլսունլար Շահ-
պապալարը կիպի մէրտ
Պիւյիւյէլիմ պիզ պիրլիքտէ
օլարագ տուաքեարլէրի
Սայէյի լութֆունտա հէր ան
Օլ... [illegible] ...եթ աեան
Նէշվ ու նիւմա պուլսուն ուլ[ում]
Բիմնէլէր գալմասըն նատան։

* * *

3. Փատիշահըմ պինլէր եաշա, պու սէ-
րայի տիլքիւշատէ
Պուլմասըն պուրատա էլէմ իւքեան
իտէճէք պիր քէտէ,
Կիւլլէր պիւլպիւլլէր հուրիլէր հէմ
պատիսէպա ամատէ,
Գալպի շահանէնիզէ պախշ իթսինլէր
ֆէրահ հէմիշէ,
Սայէյի լութֆունտա հէր ան
Օլտուգճա թէզատուիմ աեան
Նէշվ ու նիւմա պուլսուն ուլում
Բիմնէլէր գալմասըն նատան

ԿԻՒՑԹԻ

*

ՎԵՐ

[stamp] ...ԳՐԱԴԱՐԱՆ ... ZUUՍՏԱՆԻ ... ИМ. А. МЯСНИКЯНА ...

20183

2013